Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Անգլիական Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ջորջ Քերիի հրավերով, մեկնեց Անգլիա: Նորին Սրբությունը, Թեմական Առաջնորդ Եղիշե արք. Կիպրիանի հրավերով, միաժամանակ անդրանիկ հայրապետական այցելությունն էր տալու Մեծն Բրիտանիո հայ համայնքին:

ԺԱՄԱՆՈՒՄ ԱՄՍՏԵՐԴԱՄ

Նոյեմբերի 3-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Բագրատ աբեղա Գալստյանի, ժամանեց Ամստերդամ: Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Ամստերդամի համայնքային վարչության անդամները՝ հոգևոր հովիվ Մանվել վրդ. Երկաթյանի գլխավորությամբ. Բելգիայում և Հոլանդիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վիգեն Չիտեջյանը իր տիկնոջ հետ, պաշտոնատար այլ անձինք:

Ամստերդամում անցկացրած երկու օրերի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ տեղի համայնքային նորընտիր վարչության անդամների, «Արարատ» մշակութային միությանն ներկայացուցիչների և անհատ ազգայիններին հետ:

Նորին Սրբությունը հանգամանալից կերպով ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մայր Հայրենիքի այսօրվա կացությունը, ինչպես նաև անդրադարձավ համայնքային կյանքի դժվարություններին և նրանց դարմանման համար տարվող աշխատանքներին:

Նոյեմբերի 4-ին Վեհափառ Հայրապետի դեպի Լոնդոն ուղևորությանը միանալու համար Ամստերդամ ժամանեց նաև Կանադահայոց Առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6, ՀԻՆԳՇԱԲԹԻ

ԺԱՄԱՆՈՒՄ ԼՈՆԴՈՆ

Նոյեմբերի 6-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, ազգային բարերար Վալե Մանուկյանի տրամադրած անձնական ինքնաթիռով, Ամստերդամից ժամանեց Լոնդոն: «Հիթրոու» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերիի ներկայացուցիչ Ջեֆրի Ռովել եպիսկոպոսը, էկումենիկ հարաբերությունների խորհրդատու Ռիչարդ Մարշը, Մեծ Բրիտանիայի հայոց Առաջնորդ Եղիշե արք. Կիպրիանը, Մեծ Բրիտանիայում Հայաստանի ժամանակավոր հավատարմատար Նունե

Սայգայանը, դեսպանատան խորհրդական Ներսես Կարամանուկյանը, ազգային բարերար Վահե Մանուկյանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Կանադա հ հայոց Առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Բագրատ աբեղ. Գալստյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Անգլիկան Եկեղեցու աշտական ներկայացուցիչ հայր Ֆիլիպ Վենթր Սթորրը:

Ողջույնի կարճ խոսքից հետո, օդանավակայանից Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Լամբեթի պալատ, ուր Հայոց Հայրապետին դիմավորեց Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերին: Այստեղից Անգլիկան Արքեպիսկոպոսի և Մեծ Բրիտանիայում Հայաստանի ժամանակավոր հավատարմատարի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն ուղևորվեց այրքայական պալատ՝ հանդիպելու Մեծ Բրիտանիայի Եղիսաբեթ Բ թագուհուն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՂԻՍԱԲԵԹ Բ ԹԱԳՈՒՀՈՒ ՀԵՏ

Լոնդոնի ժամանակով ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը Քենթրբերիի Արքեպիսկոպոսի հետ միասին պաշտոնական հանդիպում ունեցավ Մեծ Բրիտանիո թագուհի Նորին Վեհափառություն Եղիսաբեթ Բ-ի հետ թագավորանիստ Բեկինգհեմ պալատում:

Հայոց Հայրապետի առաջին հանդիպումը Մեծ Բրիտանիայի թագուհու հետ արձանագրվեց իբրև պատմական նշանակություն ունեցող երևույթ: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հանգամանորեն անդրադարձավ Հայաստանի ներկա կացությանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությանը Հայաստանում և Սփյուռքում: Վեհափառ Հայրապետը հատկապես շեշտեց այն իրողությունը, որ ապատությունը իր հետ բերել է նաև բազմաթիվ դժվարություններ թե՛ հոգևոր և թե՛ մտավորական որոշումներում: Եվ Հայ Եկեղեցին իր կարելին է անում Հայաստանի Հանրապետությանը կորավիգ կանգնելու գործում: Ապա Հայոց Հայրապետը հայտնեց Նորին Վեհափառությանը, որ ինքը տարիներ առաջ, այն ժամանակ դեռևս եպիսկոպոսական հանգամանքով, ժողովականների հետ միասին թագուհուն հանդիպել է Լամբեթի ժողովում և այժմ գալիս է տեսակցության որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ ընտրված ապատ ու անկախ Հայաստանում:

Վերջում Նորին Սրբությունը, հանուն հայ ժողովրդի, իր շնորհակալությունները հայտնեց Եղիսաբեթ Բ-ին և հանձինս նրա ամբողջ Անգլիայի ժողովրդին՝ 1988 թվականից սկսյալ ցուցաբերած կանոնական օգնությունների ու օժանդակությունների համար, ինչպես նաև նշեց այն գործունեությունը, որն ուղղված է եղել Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդմանն ու կորացմանը:

Նորին Վեհափառություն Եղիսաբեթ Բ-ը իր հերթին մեծ հետաքրքրություն ցուցաբերեց նորանկախացած Հայաստանի Հանրապետության և ապատության պայմաններում նոր հրամայականների առջև գտնվող Հայ Եկեղեցու նկատմամբ, ինչպես նաև հայտնեց, որ ինքը ծանոթ ու տեղյակ է հայոց պատմությանը, մշակույթին և մեծապես

գնահատում է հայ ժողովրդի ու Եկեղեցու բերած մեծ նպաստը համաշխարհային մշակույթի և քաղաքակրթության գանձարանին:

Հանդիպմանը ներկա էր նաև Քենթերբերիի Արքեպիսկոպոսը: Խոսակցության ընթացքում նշվեց այն պարագան, որ կրոնական վերապարթոնքը նոր շարժումներ է ի հայտ բերել ողջ աշխարհում, և որ բոլոր քրիստոնեական Եկեղեցիները պետք է համագործակցեն միմյանց հետ՝ հոգևոր առողջ դաստիարակության իրենց հասարակաց առաքելության մեջ:

ԱՂՈԹՔ ՈՒԵՍՏՄԻՆՍՏՐՅԱՆ ԱԲԲԱՅԱՐԱՆՈՒՄ

Երեկոյան Անգլիկան Եկեղեցու ամենահոչակավոր եկեղեցիներից Ուեստմինստրյան աբբայարանում (Westminister Abbey) Հայ և Անգլիկան Եկեղեցիների պետերի նախագահությամբ և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ գոհաբանական աղոթք: Աբբայարանի մուտքին Վեհափառ Հայրապետին և Քենթրբերիի Արքեպիսկոպոսին դիմավորեց եկեղեցու և աբբայարանի ընդհանուր պատասխանատու Հոգշ. Ուեպլի Քերը: Հատկանշական է, որ արարողությունն սկսվեց մանկական երգչախմբի կողմից Հայոց Եկեղեցու «Սուրբ Աստուած» շարականի երգեցողությամբ:

Հընթացս երեկոյան ժամերգության, որ բարիգալստյան աղոթք էր ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հանդես գալով ողջույնի խոսքով, Ջորջ Քերի Արքեպիսկոպոսը ներկայացրեց իր հյուրին՝ Ամենայն Հայոց Հայրապետին՝ նշելով, որ նա գալիս է մի երկրից, որը առաջինն է ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն, չորրորդ դարում: Ապա նա անդրադարձավ Գարեգին Վեհափառի ներդրմանը Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև հարաբերությունների զարգացման և սերտացման գործում: Նորին Գերազանցությունը նշեց այն փաստը, որ Գարեգին Վեհափառը 1957 թվականին, որպես մի երիտասարդ վարդապետ, եկել էր Անգլիա՝ Օքսֆորդի համալսարանում կատարելագործելու իր աստվածաբանական ուսումը, և այժմ, 1997 թվականին, 40 տարի անց, դարձյալ գալիս է Անգլիա, բայց որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Իր պատասխան խոսքում անգլերենով Վեհափառ Հայրապետը, տպավորիչ և բովանդակալից կերպով, մասնավորապես շեշտեց, որ այսօր ազատ ու անկախ Հայաստանն ապրում է հոգևոր նոր կյանքով և, շուրջ 600 տարիներէ օտար տիրապետություններից հետո, իրեն բախտ է վիճակվել ընտրվել Հայաստանի՝ ազատ և անկախ Հանրապետության պայմաններում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՈՒԵՍՏՄԻՆՍՏՐՅԱՆ ԱԲԲԱՅԱՐԱՆՈՒՄ

Ձերդ Գերազանցություն,

Ուեստմինստրյան Աբբայարանի Արժանապատիվ հոգևոր տեսուչ, սիրելի՛ եղբայրներ և քույրեր.

Փառք և գոհություն երկնավոր Հորը, որ տվեց ինձ այս հրճվալի և հոգելից պահը՝ գտնվելու Մեծ Բրիտանիայի ազգային պատմության և

Քրիստոնեական հավատքի կարևոր կենտրոններից Ուեսթմինսթրյան Աբբայարանում, Անգլիա ժամանելուս առաջին իսկ օրը:

Նախքան իմ խոսքը՝ ես ցանկանում եմ խոնարհաբար և ամենայն սիրով իմ հարգանքի տուրքն ընծայել երկու ականավոր անձանց հիշատակին, ովքեր Ուեսթմինսթրյան Աբբայարանի երջանկահիշատակ վսեմ սպասավորներից էին՝ կանոնիկոսներ Մաքս Ուորրենի (Max Warren) և Էրիկ Աբբթի (Eric Abbat): Նրանցից առաջինն ինձ ուսուցանեց բարեկամության արվեստը, իսկ երկրորդը՝ Հիսուս Քրիստոսով մեր մարդկայնությունը միասնաբար բաժանելու արվեստը: Թող նրանց հոգիները հրճվեն երկնային երանական կյանքում, և թող նրանց օրինակը միշտ վառ մնա այս երկրի վրա բոլոր ապրողների համար:

Ձերդ Գերազանցություն, ասել, թե ես եկել եմ մի երկրից, որն ընդունել է քրիստոնեությունը սկսած չորրորդ դարից՝ դա ճշմարիտ է: Սակայն այդ երկիրն այլևս այն երկիրը չէ, ինչպիսին էր առաջ: Այո՛, ես եկել եմ նույն եկեղեցուց, սակայն այն նույնպես այլևս առաջվանը չէ: Դուք տեղյակ և ծանոթ եք մեր երկրի պատմությանը: Մեր ժողովրդի փորձություններին և դժբախտություններին, հալածանքներին և կոտորածներին, ջարդերի պահին այս Աբբայարանում մարդիկ աղոթել են անմեղ զոհերի հոգիների խաղաղության համար, ցավակցել են ողջ մնացածներին: Հայաստան աշխարհը, փառք Ամենակալին, այսօր այլևս մահվան հովիտ չէ, այն հարության վայր է:

Սիրեցյալ բրիտանացի և հայ եղբայրներ, ես գալիս եմ մի երկրից՝ նորանկախ ու ազատ Հայաստանից՝ Միացյալ Ազգերի Կազմակերպության միջոցով ազգերի համաշխարհային ընտանիքում ընդգրկված անդամ երկրից: Փառք Ամենակալին, որ ես եղա առաջին Կաթողիկոսը՝ պատիվն ունենալու իմ համեստ անձով ձեզ բերելու ոչ միայն առ Տեր Հիսուս Քրիստոս ունեցած մեր հայրերի հավատքը, այլ նաև այդ հավատքի այսօրվա կենդանի վերապրումը, վերազարթոնքը, որն այժմ բարգավաճում և ծաղկում է մեր նոր երկրում: Ի վերջո, ես ողջունում եմ ձեզ քրիստոնեական կրոնի մեջ գերագույն ճանաչված երեք առաքինություններն արտահայտող այն բառերով, որոնք ծանոթ են որպես «աստվածախոսային» առաքինություններ, Հավատք, Հույս և սեր:

«Ցաւել ի մեզ Տէր Ամենակալ զՀաւատս, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Հավատը, Հույսը և սերը առաքինի գործերի թարգմաններն են, գործեր արության և ոչ միայն կրավորապես ապրած բարության: Բարությունը քաջություն է: Սա է հայերեն իմաստը այս բառի. «գործք արութեան»: Թող Աստված այս շնորհների մեջ պահի մեզ: Ամեն:

Հետևելով Անգլիկան Եկեղեցու Արքեպիսկոպոսին, ներկա ողջ ժողովուրդը ծափահարություններով ողջունեց Վեհափառ Հորն այս խոսքերի համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Լամբեթի պալատում պաշտոնական ընդունելություն կազմակերպեց Նիկիական ակումբը, որի նախագահն է Քենթրբերիի Արքեպիսկոպոսը: Ճաշկերույթին ներկա էին ավելի քան հարյուր

հրավիրյալներ՝ Անգլիկան Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և պետական դիվանագիտական ներկայացուցիչներ:

Ճաշկերույթի ավարտին բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկավ և Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերին՝ շեշտելով Հայ և Անգլիկան Եկեղեցիների միջև եղած դարավոր բարեկամությունը և այսօր էլ կույզ Եկեղեցիների միջև սերտ համագործակցության կարևորությունը:

Այնուհետև Նորին Գերազանցությունը հրավիրեց Հայոց Հայրապետին՝ ողջունելու ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՋՈՒԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

Երեկվա նման հիշում եմ, թե սրանից 40 տարի առաջ, որպես երիտասարդ հոգևորական ուսանող, ես իմ գիտական հետազոտական ուսումնասիրություններն էի առաջ տանում Օքսֆորդում, հետևում էի այնպիսի մարդկանց դասախոսություններին, ինչպիսիք են Քլոդ Ջենկինսը (Claud Jenkins), Լեսլի Քրոսը (Lesslie Cross), Լինարդ Հոդգերսոն (Leonard Hodgerson), Վ. Ա Դիմանթը (V. A. Demant) և շատ ուրիշներ, որոնք այժմ երկրի վրա չեն ապրում, և իհարկե, Դոկտոր Հենրի Չեդուիքը (Henry Chadwick)՝ իմ հոյակապ ուսուցիչներից մեկը, որն այսօր ապրում է:

Այստեղ ուսանես այդ երկու տարիների ընթացքում ես երբեք չէի կարող պատկերացնել կամ էլ կանխատեսել, թե օրերից մի օր ես կգտնվեմ Անգլիկան Եկեղեցու վարչական կենտրոն Լամբեթում և կամ Քենթրբերիում՝ ձեր հոգևոր սուրբ կենտրոնում՝ մեր, այսպես ասած, «Սուրբ Էջմիածնում»: Եվ ահա, ես իմ ի Քրիստոս եղբոր՝ Քենթրբերիի Արքեպիսկոպոսի հրավերով գտնվում եմ այստեղ՝ խոսք ուղղելու իմ բրիտանացի եղբայրներին և քույրերին:

Ինչպես ասվել է, պատմությունը աննախատեսելի է: Եթե կիրառենք աստվածաշնչային արտահայտությունը, պիտի ասենք՝ «քամին փչում է՝ չգիտես ո՞ր կողմից և դեպի ու՞ր»: Այո, քամին փչում է, և մենք պիտի զգայուն լինենք Ս. Հոգու այդ շարժման նկատմամբ, որ կատարվում է մեր մեջ: Սակայն մենք հաճախ այնքան էլ զգայուն չենք լինում՝ հետևելու Նրա ուղղությանը: Եվ այսօր ես փառք եմ տալիս Աստծուն, որ մեզ շնորհեց այս պատիվն ու հնարավորությունը՝ իմ կյանքի ընթացքում հանդիպել Քենթրբերիի հինգերորդ Արքեպիսկոպոսին՝ սկսած Դոկտոր Ֆիշերից և այնուհետև Դոկտոր Մայքլ Ռեմզի, Դոկտոր Քոգրն, Դոկտոր Ռանսի և այսօր էլ՝ Դոկտոր Ջորջ Քերի: Ես մի տեսակ մասամբ Անգլիկան եմ. ուզեք կամ չուզեք:

Սիրելի բարեկամներ, այսօր ես ձեզ մոտ եմ ժամանել՝ Աստծու և մեր ժողովրդի կամքով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջնորդի ծայրագույն, բայց և ծանրագույն պարտականությունը ստանձնած:

Ձերդ Գերազանցություն, Դուք բարի գտնվեցիք հիշեցնել մեզ այն ժամանակվա մասին, երբ Արքեպիսկոպոս Թեյթը կամ մյուսները արձագանքեցին մեր ազգին օրհասական կարիքի, գրեթե մահվան եզրին հասած պահին, իսկ այս երկրի ականավոր որդիներից մեկի՝ Սըր Ուինսթոն Չերչիլի,

ՇՀԳՏԳԼՈՒԻՍԷ ՀՍԿՀԶ

համաշխարհային հզնաժամի մասին հինգ հատորանոց գործի առաջին գրքում համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած կոտորածների, ջարդերի նկարագրությունից հետո, կարդում ենք. «Սա հաստատապես վերջն էր»: 1923 թ. կնքված Լոզանի պայմանագրից անմիջապես հետո, երբ հայկական դատը թաղվեց, նա գրում էր. «Վախենամ, թե «Հայաստան» բառը ջնջվի աշխարհի քարտեզի վրայից»: Չերչիլն ականավոր անձնավորություն էր, մեծ պատմաբան, խոշոր գրական գործիչ, քաղաքագետ, ազգային առաջնորդ: Նա միայն մարգարե չէր: Նա ծանոթ չէր հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքին և չգիտեր, որ այդ ժամանակաշրջանին հաջորդելու էր վերածննդի պահը: Արդարացի էիք, երբ հիշատակեցիք իմ արտահայտություններից մեկը, թե՝ դա ամենամեծ Գողգոթան էր, որի միջով մենք անցանք Մեծ եղեռնի ժամանակ, և եղեռնից վերապրած զավակներ ենք: Այն օրերին ոչ ոք չէր կարող պատկերացնել, թե այս ազգը վերստին կյանքի կկոչվի: Հիշում եմ, երբ ուսանում էի Օքսֆորդում, SCM-ի կողմից հրավիրվեցի մասնակցելու Ուիթբիում կայանալիք մի միսիոներական հավաքի: Այնտեղ ինձ խնդրեցին խոսել Հայ եկեղեցու և Հայ ժողովրդի մասին: Համառոտ ներածականից հետո ես պատմեցի, թե ինչ ձեռքբերումներ ունենք ներկայում. բազմահազար ուսանողներով համալսարան և Պոլիտեխնիկական ինստիտուտ Երևան քաղաքում, ինչպես նաև 700 ուսանող՝ Բեյրութի ամերիկյան համալսարանում, և այդպես շարունակ: Վերջում, երբ տեղի ունեցավ հարց ու պատասխան, մի տարեց մարդ հարցրեց. «Ասում եք, թե հայերը շարունակու՞մ են ապրել»: Պատասխանեցի, որ ավելին եմ ասում: Նրանք ապրում են և այժմ գործոն ու նոր ազգ են: Այդ մարդն ասաց, որ հիշում էր այն ժամանակները, երբ իրենց Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչը շեշտում էր, թե իրենց հանգանակություններն ուղարկվելու են հայ գաղթականներին, իսկ իրենք էլ կարծում էին, թե ամեն բան վերջացած է, քանի որ այդ մարդը մի օր լսել էր լորդ Սոլսբերիի խոսքերը, թե իրենց նավերը չեն կարող բարձրանալ Ամանոսյան լեռներն ի վեր՝ դեպի Հայաստան:

Իրավիճակը փոխվում է: Եվ ուրեմն, այսօր ես ձեր երկիր եմ եկել այնպիսի մի ազգի երկրից, որն այլևս չպիտի հիշվի ցավի, տառապանքի, վշտի և դժբախտության տեսակետից միայն: Մենք այլևս այն եկեղեցին և ազգը չենք, որը լոկ վերհիշում է անցյալը: Մենք, փառք Աստծու, թեակոխել ենք նոր դարաշրջան, և ես սրտիս խորքում խոնարհաբար ծնկի եմ իջնում Աստծու առաջ այն բանի համար, որ դարավերջին մեզ վրա բացվեցին ազատության և անկախության պայծառ օրերը:

Ահա թե ինչու եմ այսօր ժամանել ձեզ մոտ այնպիսի մի ազգի ոգով, որը մերժեց մահանալ, որովհետև դա չէր Աստծու կամքը: Այո՛, դա չէ Աստծու կամքը: Կյանքն է Աստծու կամքը, չնորհը, պարգևը: Ուստի ես եկել եմ՝ սերտացնելու կապերը Անգլիական եկեղեցու, Անգլիայի եկեղեցու և Հայոց եկեղեցու ու նոր պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության ու ժողովրդի միջև: Պետք է ընդունենք, որ ներկայիս Հայ Առաքելական եկեղեցին այլևս այն եկեղեցին չէ, որը կաչկանդված է պատմությամբ, այլ այն ապրում է կենդանի հավատքով՝ հին եկեղեցի, բայց ոչ հնացած: Ահա Քենթբերիի Արքեպիսկոպոսի կողմից 1892 թվականին, սրանից 105 տարի

առաջ. Հայ Եկեղեցու համար Աստվածաբանական դպրոց հիմնելու նպատակով լիազորություններով օժտված և Հայաստան առաքված մի Անգլիկան քահանայի կատարած գրառումները. «Անգլիայի Եկեղեցին հայերի կողմից իրականում ընդհանուր առմամբ դիտվում է որպես Կաթոլիկ Եկեղեցու մի ճյուղավորումը, որը կամենում է այնքան ցանկալի օգնություն ցույց տալ Հայ Եկեղեցուն՝ միևնույն ժամանակ առանց մարդորսություն կատարելու ջանքերի»:

Ձեր Եկեղեցին պարզորոշ կերպով ցույց է տվել էկումենական երկխոսության եղանակը՝ նեցուկ և հենարան լինելով տեղական Եկեղեցիներին, այլ ոչ թե զուգահեռ Եկեղեցիներ հիմնելով: Եվ երբ վերը նշված պատվիրակությունը մեկնում էր Հայաստան, եպիսկոպոսները գրեցին. «Մեր նպատակը չէ այդ քրիստոնյաներին տարհամոզել դեպի Անգլիայի Եկեղեցին, ոչ էլ փոխել նրանց եկեղեցական սովորություններն ու ավանդությունները, կամ էլ նրանց համոզմունքն ու դավանանքը, որոնք չեն հակասում այն հավատքին, որ նրանց է ներշնչել Սուրբ Հոգին, այլ ձեզ ուղարկում ենք, որպեսզի դուք խրախուսեք նրանց բարելավել իրենց կրոնական դրությունը և զորացնել իրենց հինավուրց Եկեղեցին, նոր կյանք ու շունչ տալ այդ Եկեղեցուն»: Ձեր մեծ Եկեղեցին, որի հանդեպ ես ինձ շատ պարտավորված եմ զգում, ինձ մարտահրավեր նետեց՝ վերագտնել իմ սեփական կենդանի և կենդանարար ավանդույթը, այլ ոչ թե այն ավանդույթը, որ քարացած վիճակում պահպանված էր մեր Եկեղեցու հայրերի գրվածքների մոռացված էջերում: Այն ինձ առիթ տվեց կյանքի կոչել մեր Եկեղեցու թաքնված կենդանի ուժերը: Էկումենական շարժումն ինձ համար այն է, երբ քեզ դիտում ես ուրիշի աչքերով, և երբ վերջինս դիտում է ինքն իրեն քո աչքերով: Էկումենիզմը այն ոգին է, որով մենք կարող ենք հանդիպել և տեսնել մեր հավատքի փոխադարձ դրական կողմերը: Էկումենական շարժման ուղին, որին ես ծառայել եմ շուրջ 40 տարի, այսօր տանում է դեպի կյանքի, այլ ոչ թե զուտ մտային, հղացական խորհողության մտքի: Աստվածաբանություն, որը Քրիստոսի հավատքը մեկնաբանում և ուսուցանում է մարդկանց, ովքեր այսօր ապրում են իրենց կյանքը՝ հանդիպելով չարիքների, խառնաշփոթությունների և աշխարհիկ բնույթի շատ այլ երևույթների: Ուստի այսօր ես եկել եմ՝ նախ հարգանքի տուրք մատուցելու այն Եկեղեցուն, որն ինձ համար խթան հանդիսացավ՝ նոր տեսակետից նայելու իմ սեփական Եկեղեցուն, և այդ նոր տեսակետն էլ օգնեց ինձ բացահայտել շատ բաներ, որ դուրս էին մնացել իմ տեսադաշտից: Եվ ապա կատարել մի նոր քայլ՝ ուղղված այն բանին, որ Հայ Առաքելական Եկեղեցին և Անգլիկան Եկեղեցին դառնան ոչ միայն միմյանց նկատմամբ հինավուրց բարյացակամության հուշերով ապրող Եկեղեցիներ, այլև այսօր ներդրավվեն ընդհանուր համագործակցության մեջ:

Մեր Եկեղեցին այսօր վերածննդի, վերակենսավորման կարիք ունի: Այսօր, կրկին անգամ Փառք Աստծու, մենք Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում ունենք 110 ուսանողներ, ունենք Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոն: Մեր Եկեղեցին այլևս այն չէ, ինչ որ էր ԺԹ դարում կամ այս դարի սկզբում: Եվ այդ վերանորոգման շարժումն այն շարժումն է, որը ես եկել եմ ձեզ անձամբ վկայելու: Խնդրում եմ, մեկնեք մեզ

ձեր ձեռքը, առանց բռնելու մեր ձեռքի տեղը, թող մեր ձեռքերն աշխատեն մեր սեփական հողում, հոգեպես և ֆիզիկապես, և թող ձեր ձեռքերը խառնվեն մեր ձեռքերին, որովհետև երբ ձեր ձեռքը մեր ձեռքում է, և մեր ձեռքը՝ ձեր ձեռքում, մենք կհանդիպենք Աստծու ձեռքերին:

Խոսքս ավարտելուց առաջ կասեմ ևս մեկ բան: Մեր ժողովրդի վերածնունդն այսօր խորհրդանշվում է մեր մեջ Նունե Սարգսյանի՝ Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարի ներկայությամբ: Նրա ամուսին և իմ մտերիմ բարեկամ Արմեն Սարգսյանը՝ մեր դեսպանը Մեծ Բրիտանիայում, չկարողացավ գալ առողջական վիճակի պատճառով: Ես այստեղ ողջունում եմ ձեր երկու դեսպաններին՝ Դեյվիդ Միլլերին և Ջոն Միթչինրին: Իսկապես, ո՞վ կպատկերացներ, թե օրերից մի օր Մեծ Բրիտանիան կունենա դեսպան Երևանում, իսկ Հայաստանը՝ Լոնդոնում:

Կեցցե՜ն մեր երկու ազգերը, և մեր երկու եկեղեցիները, որոնք եղել են մեր երկու ազգերին սնուցող մայրերը:

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո շնորհակալության և երախտիքի խոսք ասաց Նիկիական Ակումբի ատենապետը, որը հակիրճ ներկայացրեց Նիկիական Ակումբի պատմությունը, ապա շնորհակալություն հայտնեց Քենթրբերիի Արքեպիսկոպոսին և նրա տիկնոջը՝ Այլին Քերրիին՝ այս գեղեցիկ և տպավորիչ հանդիպումը կազմակերպելու համար:

Վեհափառ Հայրապետն իր խոսքի ավարտին մի շատ գեղեցիկ արծաթյա ափսե նվիրեց Քենթրբերիի Արքեպիսկոպոսին՝ ի նշան Հայ և Անգլիկան Եկեղեցիների եղբայրության:

Վերջում երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ:

Հայոց Հայրապետի հայերեն աղոթքով և օրհնությամբ փակվեց այս ջերմ հանդիպումը:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 7, ՈՒՐԲԱԹ

ԱՇՏԵԼՈՒԹՅՈՒՆ "CHRIST CHURCH PRIMARY SCHOOL"

Նոյեմբերի 7-ին, առավոտյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, այցելեց Անգլիկան Եկեղեցու ծխական ամենօրյա վարժարաններից մեկը՝ "Christ Church Primary School": Վեհափառ Հայրապետը շրջեց դպրոցի շենքում, դասարան առ դասարան հանդիպեց աշակերտների և ուսուցիչների հետ: Ապա դպրոցի ընդհանուր աշակերտությունը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հատուկ հայտագիր՝ արժանանալով Նորին Սրբության խրախուսանքին և օրհնությանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ "BBC WORD SERVICE" ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻՆ ԵՎ "THE TIMES" ԹԵՐԹԻՆ

Նույն օրը Նորին Սրբությունը երկու հարցազրույց տվեց "BBC Word Service" և "The Times" լրատվամիջոցներին: Պատասխանելով իրեն

ուղղված հարցերին, Վեհափառ Հայրապետը մասնավորապես խոսեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ներկա իրավիճակի, ինչպես նաև քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների մասին:

Հաջորդ օրը BBC ռադիոկայանը 25 րոպե տևողությամբ ձայնասփռեց այս հարցազրույցը: Իսկ «The Times»-ը յայնորեն մեկնաբանեց և անդրադարձավ Վեհափառ Հայրապետի այցելությանը:

ԱԹԵԼՈՒԹՈՒՆ ՀՈՒՆԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ

Նոյեմբերի 7-ին, կեսօրին, Վեհափառ Հայրապետն այցելեց Հույն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Գրիգորիոս մետրոպոլիտին: Արքեպիսկոպոսարանի մուտքին Գրիգորիոս արքեպիսկոպոսը, իր օգնական եպիսկոպոսներով ու հոգևորական դասով դիմավորելով Հայոց Հայրապետին, առաջնորդեց մատուռ, ուր տեղի ունեցավ կարճատև աղոթք: Եկեղեցական արարողությանը հաջորդած պաշտոնական ճաշկերույթի ընթացքում, հանուն Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի, ողջույնի խոսքով մեկ անգամ ևս հանդես եկավ Գրիգորիոս արքեպիսկոպոսը: Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքում անդրադարձավ Հայաստանի հոգևոր կյանքում տեղի ունեցող վերելքին, ներկայիս մարտահրավերներին ու դժվարություններին, ինչպես նաև արձանագրված հաջողություններին: Նորին Սրբությունը նաև պատմեց վերջերս Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած այցելության մասին, որն անցավ բացառիկ խանդավառ մթնոլորտում: Հանդիպումն ավարտվեց հուշանվերների փոխանակմամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՐԴԻՆԱԼ ԲԱՊԻ ՀՅՈՒՄԻ ՀԵՏ

Նույն օրը Վեհափառ Հայրապետը պաշտոնական հանդիպում ունեցավ Լոնդոնի Կաթոլիկ Եկեղեցու Կարդինալ Բապի Հյումի հետ: Կարդինալի հետ ունեցած զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը մասնավոր կերպով անդրադարձավ Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև համագործակցությանը, Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարության կատարվող աշխատանքներին՝ հայտնելով, որ մոտ ապագայում այս տոնակատարությունների ծիրի մեջ հայ մշակույթի գանձերի ու արվեստի գործերի ցուցահանդես պիտի բացվի նաև Վատիկանում: Նորին Սրբությունն ընդհանուր գծերով ներկայացրեց ապատության ճանապարհով քայլող Հայաստանում հոգևոր և բարոյական կյանքի դաստիարակությանը լծված Հայ Եկեղեցու գործունեությունը, Հայաստանում և Արցախում տիրող կացությունը:

***

Նույն օրը Վեհափառ Հայրապետը պաշտոնական հանդիպումներ ունեցավ Council for Christian Unity-ի ներկայացուցիչ դոկտ. Մերի Թանրրի

(Mary Tanner), որ նաև Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչն է ԵՀԽ-ում, Անգլիկան Եկեղեցու էկումենիկ շարժման ընդհանուր պատասխանատու քարտուղարի ներկայացուցիչ Հոգշ. Դեյվիդ Հաուիթի հետ:

Խոսակցության ընթացքում արծարծվեցին նկրկա ժամանակներում էկումենական շարժման առջև դրված դժվարին հարցերը, որոնք առավել ևս անհրաժեշտ են դարձնում բոլոր Եկեղեցիների համագործակցության ստիպողական անհրաժեշտությունը:

Վեհափառ Հայրապետը, ելնելով իր փորձառությունից, ընդգծեց, որ էկումենական շարժումը պետք է լինի Եկեղեցիների կյանքի հետ առնչվող առավել շեշտված շարժում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հանդիպեց Անգլիայում Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ (Ասորի, Ղպտի, Հաբեշ, Հնդիկ): Հանդիպման ընթացքում նրանք Նորին Սրբությանը հայտնեցին իրենց ունեցած դժվարությունների և ծավալած աշխատանքների մասին՝ միևնույն ժամանակ ցանկություն հայտնելով Անգլիայում էկումենական հարաբերությունների կարգավորման համար գործել ոչ թե առանձին-առանձին, այլ մեկ միասնական ընտանիքի սկզբունքով:

Իր հերթին Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից կատարվող աշխատանքները և կրկին հայտնեց, որ մոտ ապագայում պիտի առավել սերտացվեն այս ընտանիքի Եկեղեցիների կապերն ու համագործակցությունը:

ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ Ս. ՊՈՂՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Նույն օրը, երեկոյան ժամը 17.00-ին, Լոնդոնի Սբ. Պողոս Մայր եկեղեցում կազմակերպված էր հատուկ աղոթություն՝ Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելության առիթով:

Բարիգալստյան և բարեհաջողության խոսքերից հետո, Անգլիկան Եկեղեցու ծիսական ավանդության համաձայն, Մայր եկեղեցում կատարվեց երեկոյան ժամերգություն:

Լոնդոնի եպիսկոպոս Ռիչարդ Չարթրրսի նախագահությամբ շուրջ մեկ ժամ տևած հոգեպարար արարողությունն ուղեկցվեց Մայր Տաճարի մանկական երգչախմբի երգեցողությամբ:

Ժամերգությունից հետո Լոնդոնի եպիսկոպոսարանում տեղի ունեցավ հյուրասիրություն, որին հրավիրված էր նաև Անգլիկան Եկեղեցու հեղինակավոր աստվածաբան պրոֆ. Հենրի Չադուիքը, որը ժամանակին Օքսֆորդում եղել է Վեհափառ Հայրապետի ուսուցիչը: Ներկաների թվում էր նաև ազգային բարերար Վաչե Մանուկյանը:

Հյուրասիրության աղջուրի խոսքով հանդես եկավ Լոնդոնի եպիսկոպոսը՝ բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին և մեծ

պատիվ համարեց այն, որ ինքը առիթն ունի իր ընտանեկան հարկից ներս հյուրընկալելու Հայոց Հայրապետին: Ապա Նորին Գերազանցությունը բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի ծավալած գործունեությունը միջեկեղեցական ասպարեզում: Նա իր խոսքում հիշատակեց Նորին Սրբության վերջերս Գրացի միջեկեղեցական ժողովում տված բանախոսությունը՝ համարելով այն մի մարտահրավեր բոլոր Եկեղեցիների համար՝ այսօրվա դժվարությունները գնահատելու տեսանկյունից: Նա մեջ բերեց նաև վերոհիշյալ ճառում Վեհափառ Հայրապետի կատարած հղումը Լոնդոնի Քամդենթաուն մետրոյի կայարանի պատին արված մակագրությունից՝ ասելով. «Ես ուղղակի ցնցվեցի այն արտահայտությունից, որ Նորին Սրբությունն իր խոսքում ասաց, որ ինքն Անգլիայում ուսանելու տարիներին կարդացել էր Քամդենթաուն մետրոյի կայարանի պատի արձանագրությունը, թե «Աշխարհը փխրուն է, աղոթքով դիպեք նրան»: Սա խոսում է այն մասին, որ Նորին Սրբության աչքից ամենափոքրիկ իսկ արտահայտություն, միտք կամ գործ, որը կարող է ծառայել մարդկության բարօրությանը»:

Այնուհետև ներկաներին իր ողջույնի խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

«Այսօր ես խորապես հուզվեցի այն հանգամանքից, որ Սբ. Պողոս եկեղեցին մեզ՝ հայերիս համար դարձավ սրտամոտ մի աղոթավայր: Ես նախկինում եղել եմ այդ եկեղեցում, այնտեղ լսել այնպիսի պերճախոս քարոզիչների, ինչպիսիք են Մայքլ Ռեմզին, Կարդինալ Հինսը: Այսօր մեր, իբրև հայ քրիստոնյա, ներկա գտնվելը այստեղ բավական շատ հայերի, մեր արքեպիսկոպոսների և քահանաների հետ, խոսում է այն մասին, որ այդ եղբայրությունը, բարեկամական ոգին մեր նկատմամբ բոլոր դեպքերում անկեղծ են, ես դա զգում եմ սրտիս խորքում: Եվ այսօր, սիրեցյալ եղբայրներ, ես առիթն ունեմ երախտագիտությունս հայտնել ձեզ, ձեր կանանց և երեխաներին Անգլիական տան մեջ գտնվելուս համար ոչ միայն իբրև մի բարձրաստիճան հոգևորական անձ, այլ այն բանի համար, որ այն ինձ համար հարազատ տուն դարձավ:

Ինչպիսի մեծահոգություն ձեր կողմից՝ այսօր այստեղ հրավիրել մի անձնավորության, որը մեծ ազդեցություն է գործել կյանքիս և մտածողությանս վրա: Երբ վերադարձա Օքսֆորդից, այլևս այն նույն մարդը չէի, ինչ որ էի Օքսֆորդ ընդունվելիս: Այդ փոփոխության մեջ վճռորոշ դեր է խաղացել պրոֆեսոր Հենրի Զեդուիքը: Իր ճշմարիտ, շիտակ գիտունությամբ, ազնվությամբ և բարության հետ զուգորդված անաչառությամբ՝ ճշմարտությունը հայտնել ոչ թե կոպիտ կերպով, այլ ներողամտորեն. ահա այն, ինչ սովորեցի նրանից, նրա դասախոսություններից և նրա կողմից իմ թեզի ծայրահեղ մանրակրկիտ ուսումնասիրությունից: Նա ինձ ներշնչեց այն ինքնավստահությունը, թե ես իրոք ինչ-որ արժեքավոր բան եմ արել: Հիրավի, նրա առողջ գիտական ոգին, առարկայական մոտեցումը, ազնվության հանդեպ լայնախոհությունը անջնջելի հետք են թողել ինձ վրա: Նրա մոտ ես տեսել եմ գիտական առարկայական խիստ մեթոդաբանություն, որը ներդաշնակվել է չնորհալի ոգով դրսևորման հետ:

Ձերդ Գերազանցություն, անգլերեն լեզվով հրատարակվող մի հայկական

ամսագրում՝ «Ararat» անունով, ես կարդացել եմ Լոնդոնի քաղաքապետի և Լոնդոնի եպիսկոպոսի այն հիմնադրամի մասին, որ նրանք հաստատել էին Հայոց ջարդից մազապուրծ փրկված գաղթականների համար՝ 1916-1918 թթ.: Ես աչքի եմ անցկացրել նվիրատուների ցանկերը, որոնցում անգլիացիներն ու հայերը անխտրաբար և միասնաբար, մեծ ու փոքր ներդրումներով, մասնակցում էին հայ ժողովրդի տառապանքը մեղմացնելու նվիրական գործին: Այսօր այդ երևույթն այլևս վերջ է գտել, փառք Աստծու: Այսօր, այսքան երկար տարիներ անց օտար լծի հպատակությունից ազատվելուց և Օսմանյան կայսրության կամ սովետական իշխանության շղթաները թոթափելուց հետո մեր երկիրը՝ Քրիստոնեական հավատքի այդ օրրանը, վերստին նվաճել է իր ազատությունն ու անկախությունը՝ այն ամենամեծ շնորհները, որ Աստված տվել է մեզ, և հանուն որոնց մենք այնքան արյուն ենք թափել:

Մեր երկիրն այսօր վերածննդյան, վերափոխման, բյուրեղացման շրջան է ապրում՝ մեր դարի ամենաբարդ ժամանակահատվածներից մեկը: Եվ եթե մենք այս իրավիճակում չգործենք ինչպես հարկն է, ապա կարող ենք բաց թողնել այն հնարավորությունը, որն, անձամբ իմ կարծիքով, Աստված մեզ է տվել դարավերջին՝ շնորհելով մեր ժողովրդին ազատ և անկախ Հանրապետություն: Այժմ մենք մեր դեմքը, նկարագիրն ունենք աշխարհի ազգերի ընտանիքում՝ Միացյալ Ազգերի Կազմակերպությունում: Ցանկանում եմ մեր գոհությունն արտահայտել առ Աստված և, իհարկե, գնահատանքը մեր քրիստոնյա եղբայրներին և քույրերին, կառավարություններին և պետություններին՝ հարության և վերազարթոնքի այս նոր դարաշրջանում մեր երկրին աջակցելու բոլոր ջանքերի համար: Դուք աջակցեցիք մեր երկրին մեր ողբերգության ժամին, սակայն չլքեցիք մեզ նաև խաղաղության պահին: Կարծեմ, ձեր զավակներից մեկն էր՝ Սըր Ուինսթըն Չըրչիլը, որն ասել է, թե «խաղաղության գինը ծանր է»: Դա նրա արտահայտությունն էր, և այդ արտահայտության ամենափայլուն պահը մեր պատմության ընթացքում վրա հասավ 1991 թ., երբ հռչակվեց մեր նորանկախ Հանրապետությունը:

Մեր եկեղեցին՝ հինավուրց, սակայն ոչ հնացած, նորից կյանքի կոչվեց իր ամբողջական կերպարանքով, իսկ նրա հոգևոր կենտրոնը՝ Սբ. Էջմիածինը, հանդես է գալիս նոր կոչմամբ՝ ազգին տալ հոգևոր սնունդ, միասնություն, համերաշխություն, համախմբվածություն, հաստատունություն՝ խարսխված բարոյական սկզբունքների, քրիստոնեական հավատքի վրա, որը դյուրին չէ արմատախիլ անելը, խորտակելը, ինչպես որ միշտ էլ դյուրին չէ եղել մեր պատմության ընթացքում: Մենք ունեցել ենք թագավորություններ, որոնք եկել են ու անցել-գնացել, սակայն Եկեղեցին միշտ էլ մնացել է ներշնչանքի աղբյուր:

Կյանքը շարունակվելու է, և այդ շրջագծում և միջավայրում է, որ Անգլիայի Եկեղեցու հետ համագործակցությունը կնպաստի օտարների դարավոր տիրապետությունից և շահագործումից մեր երկրի ապաքինման գործին: Այսօր մենք այլևս չենք կամենում, որ մեր մասին խոսեն իբրև կոտորած ու ջարդ տեսած, աքսորված ու հալածված, եղեռնի ենթարկված ազգ: Այդ պատկերը (Image) պետք է վերանա: Մենք նոր նկարագիր ենք կերտում, և ուրեմն, գրեք ձեր ձեռքը մեր ափի մեջ:

Եկեք զորացնենք մեր ձեռքերը միասնաբար, որովհետև ես կարծում եմ, թե երբ ձեռքդ դնում ես մեկ ուրիշի ձեռքի մեջ, ապա դա ոչ թե վերջինիս

ձեռքն է, այլ Աստծու ձեռքը, ինչպես ասացի անցյալ օրը Լամբեթում: Ահա դա է այն հեռանկարը, որի ծիրում սա կկամենայի տեսնել մեր եղբայրության և բարեկամության շարունակությունը, մեր կապերի ամրապնդումը և Մենթիլերիի Արքեպիսկոպոսարանի Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հետ փոխհարաբերությունների զարգացումը, ինչպես նաև էկումենական հարաբերությունների զարգացումը: Այսօր գտնվելով այս տաճարում Արքեպիսկոպոսի ներկայացուցիչների հետ միասին, կկամենայի հաղորդել նրան, որ այդ հինավուրց եկեղեցիները մտադիր են լինել նորովի ստեղծագործ և գործուն եկեղեցիներ՝ ի սեր Քրիստոսի և հանուն այն առաքելության, որ նրանք հանձն են առել ի կատար ածել:

Թող Աստված օրհնի մեզ բոլորիս այս եղբայրական և բարեկամական հարաբերությունները առավել ևս զարգացնելու և ամրացնելու գործում:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 8, ՇԱԲԱԹ

ԱԳԲԵԼՈՒԹՅՈՒՆ ՕՔՍՖՈՐԴ

Շաբաթ օրը, նոյեմբերի 8-ին, Վեհափառ Հայրապետը Անգլիայի Հայոց թեմի Առաջնորդ Եղիշե արք. Կիպիրյանի, Հովնան արք. Տերտերյանի, Հագբաս աբեղ. Դալստյանի, Անգլիական Եկեղեցու Արքեպիսկոպոսի էկումենիկ հարաբերությունների գծով խորհրդական Ռիչարդ Մարշի և մի խումբ Անգլիական եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչների ուղեկցությամբ սպրդեցավ Օքսֆորդ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՔԵԹՐԻՆՋ ՔՈԼԵՋԻ ՊԱՏՎՈ ԱՆԴԱՄ

Առաջին պաշտոնական հանդիպումը Օքսֆորդում տեղի ունեցավ Ս. Քեթրինջ քոլեջում: Վեհափառ Հայրապետին դիմավորեցին քոլեջի տնօրենն ու դասախոսական կազմը, նրանց թվում և Օքսֆորդի Սբ. Բառնաբաս եկեղեցու հովիվ Քենրն Սայքս Ռայթը և «Քեստոն» գիտահետազոտական հաստատության տնօրեն Քենրն Մայքլ Բորդոն: Ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպված ընդունելության ավարտին Նորին Սրբությունն ընդունվեց Սբ. Քեթրինջի ընկերակցության պատվո անդամ: Արտահայտելով իր երախտագիտությունը, Վեհափառ Հայրապետը վերհիշեց ուսանողական տարիները քոլեջում, որի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սպասավոր առաջին ուսանողը դարձավ 40 տարի առաջ: Ստորև համառոտ ներկայացնում ենք Վեհափառ Հայրապետի խոսքը.

«Այս քոլեջն ավարտելուց ի վեր մշտապես իմ գործն է եղել ճշմարտության որոնումը և այդ ճշմարտության մեկնությունը մարդկանց: Ինձ համար պատիվ է եղել համարվել այս Քոլեջի անդամներից մեկը: Շատ ուրախ եմ այս սրահում տեսնել մարդկանց, որոնք այն ժամանակ ավարտական լսարանի ուսանողներ էին, կամ այլ պաշտոններ էին վարում, ինչպես օրինակ՝ Հայր Մայքլ Ռայթը, Մայքլ Բորդոն, որի հետ միասին էինք ապրում ու պատրաստում դասերը Համայնարանում: Մաղթում եմ ամենայն

բարիք գիտության խթանման և զարգացման բնագավառում Սբ. Քեթրինզ Քոլեջի միջոցով, որն իմ ուսանելու տարիներին կոչվում էր Սբ. Քեթրինզ Ընկերություն և գտնվում էր մեկ այլ վայրում, այլ ոչ այստեղ, այս շքեղ համալիրում: Թույլ տվեք խոսքս ավարտել՝ հարգանքի տուրք մատուցելով Քոլեջի տնօրեն Սենթ Քեթրինզ Ընկերության այն ժամանակվա նախագահ նշանավոր պատմաբան Էլը Բուլոքին, որն այնքան բան արեց, որպեսզի Ընկերության պայմանները բարելավվեին, այն Քոլեջ դառնար և այս նոր վայրում տեղավորվեր, որտեղ ուսանողները շատ ավելի լայն հնարավորություններ կունենան գիտելիքներ ձեռք բերելու: Շնորհակալ եմ այս պատվի համար: Շնորհակալություն եմ հայտնում ձեր բոլոր գործընկերներին և մաղթում ամենայն բարիք: Կկամենայի օրերից մի օր ձեզնից ոմանց տեսնել Հայաստանում՝ այն երկրում, ուր իմ հայրերն են ապրել: Երբ ես ուսանում էի այստեղ, այդ երկիրը ծանր պայմանների մեջ էր գտնվում: Այժմ գալիս եմ վերածնված, լիովին բարեփոխված մի երկրից, որը ստրկությունից ու հպատակությունից անցել է անկախության ու ազատության՝ հռչակելով Հայաստանի Հանրապետությունը: Սա է մեր պատմության նոր դարաշրջանը: Ես ողջունում եմ ձեզ ազատ ու անկախ Հայաստանի և Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի անունից: Շնորհակալություն»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն ընթերցեց Ս. Քեթրինզ քոլեջի պատվո անդամ ընդունվելու ուխտագիրը՝ ըստ ընկալյալ սովորության.

ԵՍ՝ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԸՆՏՐՎԵԼՈՎ ՕՔՍՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ՔԵԹՐԻՆԶ ՔՈԼԵՋԻ ԱՆԴԱՄ, ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՄ, ՈՐ ԵՍ ԿՊԱՀՊԱՆԵՄ ՔՈԼԵՋԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԸ, ԸՍՏ ՆՐԱՆՑ ԿԱՏԱՐԵԼՈՎ ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՍՏԵԼՈՎ ԴՐԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ PUSSEY HOUSE ՎԱՆՔ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ

Օքսֆորդի համալսարանի կարևորագույն կրոնական հաստատություններից մեկում «Pussey House»-ում, ուր կենտրոնացված են աստվածաբանական հպարավոր հրատարակություններ, Վեհափառ Հայրապետին դիմավորեցին հաստատության տնօրեն Հոգշ. Ֆիլիպ Ուրսելը, հաստատության աշխատակիցներ, ուսանողներ:

Եկեղեցում տեղի ունեցած աղոթքի կարճ արարողությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, գրադարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

Հընթացս ընդունելության, որին մասնակցում էին նաև բազմաթիվ ուսանողներ, Նորին Սրբությունը պատմեց այս գրադարանում [illegible]ցկացրած և ընդհանրապես իր ուսանողության տարիների մասին՝ հորդորելով ուսանողությանը լավագույնս օգտագործել ընձեռնված այս մեծ հնարավորությունը:

Ապա Վեհափառ Հայրապետը, շրջելով գրադարանում, ներկաներին ցույց տվեց այն գրասեղանը, որի առջև մշտապես կատարում էր իր աշխատանքները, և որ այն կարմանալիորեն նույնն է մնացել, ինչպիսին էր 40 տարիներ առաջ:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Սիրելի ուսանողներ և դասախոսներ,

Ինչպես քիչ առաջ Ս. Քեթրինեզ քոլեջում ասացի, ուսումնառությունից հետո իմ կյանքը դարձավ ճշմարտության որոնում պատմության մեջ և ժամանակակից կյանքում: Եվ իսկապես, 40 տարի շարունակ Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Ամերիկայում, այժմ էլ իմ հայրենիքում՝ Հայաստանում, տարբեր պատասխանատվություններ ստանձնած լինելով, ես գիտակցում եմ, թե որքան ավելի շատ եմ ես պարտական Օքսֆորդին, քան ժամանակին կարծում էի: Այդ միջավայրը, թե՛ հոգևոր, և թե՛ մտավոր առումով, այնպիսի ազդեցություն թողեց ինձ վրա, որ ես երբեք չեմ մոռանա այն, ինչ ձեռք բերեցի, քանզի սովորածս դարձավ գոյությանս մասը: Ինձ համար գոյացական փորձառություն էր ոչ թե գալը և գիրք ընթերցելը, այլ հաղորդակցվելը մարդկանց հետ, և ես զգացի այդ անկեղծությունն ու շիտակությունը Pusey House*–ի եղբայրության անդամների մոտ...*

Հենց այս ոգու շնորհիվ Pusey House*-ում գտնվելիս միշտ ինձ ազատ եմ զգացել, ինչպես տանը: Ես կկամենայի գնահատել այն աշխատանքը, որ դուք կատարում եք ներկայումս, շարունակում այս հաստատության նվիրական գործը: Ես գնահատում եմ նաև ուսանողներին: Այսօր իմ մեջ միայն մի զգացմունք է առաջանում ձեր նկատմամբ՝ նախանձ: Ուրեմն, պահպանեցեք Օքսֆորդի ավանդույթները, որովհետև դրանք ձեզանում կավելանան, երբ աշխարհ մտնեք և սկսեք ձեր ծառայությունը մարդկությանը: Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում Ամերիկյան Համալսարանի մուտքի դռան վրա ես կարդացել եմ հետևյալ մակագրությունը. «Մտեք ուսանելու համար, դուրս եկեք ծառայելու»: Սա է Համալսարանի նշանաբանը: Ընդունվում ես ուսանելու և հեռանում՝ ծառայելու: Մաղթում եմ ձեզ լավագույնը:*

Ինչպես գիտեք, ես գալիս եմ Հայաստանից՝ Սուրբ Էջմիածնից: Այն թե՛ Հայաստանում, թե՛ համայն Սփյուռքում ապրող ողջ հայության համար ամենանվիրական սրբավայրն է: Այն մեր, իբրև քրիստոնյա ազգի, հավատքի ծննդավայրն է: Այդտեղ էր, Սբ. Էջմիածնում, որ մեր ազգը վերածնվեց իբրև քրիստոնյա ազգ, երբ 301 թվականին, Կոստանդին կայսեր կողմից Քրիստոնեության ընդունումից մոտ 22 տարի առաջ, Հայոց Թագավոր Տրդատը հռչակեց Քրիստոնեությունն իբրև մեր ազգի պետական կրոն: Այդ ժամանակից ի վեր, սկսած չորրորդ դարի երկրորդ տարվանից, մենք շարունակել ենք այդ վկայությունը և պատրաստվում ենք 2001 թ. նշել Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրման 1700–ամյա հոբելյանը: Հուսով եմ, որ օրերից մի օր ձեզանից ոմանք կգան տեսնելու այն 2001 թվականին, կամ էլ նույնիսկ մինչ այդ:

Ավարտելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ այս հանդիպման, գրադարանին նվիրեց Սուրբ Էջմիածինը պատկերող յուղաներկ մի կտավ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՎԵՐԸ BODLEIAN LIBRARY ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Նույն օրը Վեհափառ Հայրապետը այցելեց համալսարանի ամենամեծ Bodleian Library *գրադարան, որտեղ կազմակերպված էր հայկական ձեռագրերի և ինքնատիպ գրքերի ցուցադրություն: Վեհափառ Հայրապետը գրադարանին նվիրեց Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի վերջին երկու տարիների հավաքածուն:* Bodleian Library*-ի տնօրինությունը դիմեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռի մյուս հրատարակությունները ևս գրադարանին տրամադրելու խնդրանքով:*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «BALLIOL COLLEGE»-ՈՒՄ

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի համալսարանի տնօրինությունը պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ էր կազմակերպել «Balliol College»*-ում: Ընդունելությանը հրավիրված էին Օքսֆորդի համալսարանների դասախոսներ և գիտնականներ, ի թիվս որոնց՝ նաև նշանավոր հայագետ և Վեհափառ Հայրապետի երկար տարիների բարեկամ Ռոբերտ Թոմսոնը:*

Այստեղ բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկավ քոլեջի ընդհանուր նախագահ դոկտ. Քոլին Լուկասը, որը նախ շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին այս հրավերն ընդունելու համար, այնուհետև, ներկայացնելով Վեհափառ Հայրապետին, մեծարգո դոկտորը մեծ պատիվ համարեց այն, որ 40 տարիներ առաջ Օքսֆորդում ուսանած երիտասարդ վարդապետը այսօր կրկին վերադարձել է այստեղ, բայց որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ապա դոկտ. Լուկասը հրավիրեց Նորին Սրբությանը իր խոսքն ուղղելու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը փառք և գոհություն հայտնեց Աստծուն այս ընծայված գեղեցիկ առիթի համար, որով «հրաշալի հիշողություններ արթնացան կապված իմ ուսանողության տարիների հետ»: Ապա Նորին Սրբությունը, խոսելով ուսման և աշխատանքի կարևորության մասին ընդհանրապես, շեշտեց այն պարագան, թե ինչ մեծ դեր ու նշանակություն է ունեցել Օքսֆորդն իր կյանքում մտավորական պատրաստության տեսակետից. «Օքսֆորդը ինձ համար եղավ մի տեսակ իմ երկրորդ ծննդյան՝ գիտակցական կյանքի առավել արժևորման օջախը, և ես այժմ, երբ կրկին անգամ այցելում եմ այստեղ՝ այս անգամ Հայ Եկեղեցու իշխանության ծայրագույն և ծանրագույն պատասխանատվությունը ստանձնած, զգում եմ, որ մուտք եմ գործում մի հարազատ տուն, որտեղ ես առավել ևս ամրացա իմ հոգևորական կոչման, իմ սեփական ազգին ծառայելու և այս ճանապարհով նաև ընդհանուր քրիստոնեական կյանքին մեր ազգային լուման բերելու գիտակցության մեջ»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՔՈԼԵՋՆԵՐ

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը այցելեց Անգլիական Եկեղեցու աստվածաբանական երկու քոլեջներ՝ Wycliffe Hall, *որտեղ իր*

ուսանողական երկու տարիներն էր անցկացրել Նորին Սրբությունը, որի եղել էր նաև իր բնակավայրը, և St. Stephen's House, ծանոթացավ դրանց ուսումնական ծրագրերին և կատարվող վերանորոգություններին ու կրած փոփոխություններին:

Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց նաև տեղի մատուռ և իր գոհաբանական աղոթքն առաքեց աս Աստված:

Վեհափառի այցելությունն Օքսֆորդ ավարտվեց հռչակավոր «Blackwell» գրախանութ կատարած այցով, ուր Վեհափառ Հայրապետը ծանոթացավ աստվածաբանական վերջին հրատարակությունների հետ:

Ավարտելով իր այցելությունը Օքսֆորդում, Վեհափառ Հայրապետը մեկնեց Անգլիկան Եկեղեցու հոգևոր կենտրոն՝ Քենթրբերի:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9, ԿԻՐԱԿԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԵՆԹՐԲԵՐԻ, ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ննջեցելոց Հիշատակի կիրակի օրը, նոյեմբերի 9-ի առավոտյան, Անգլիկան Եկեղեցու հոգևոր կենտրոնում՝ Քենթրբերիի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետը Անգլիկան Եկեղեցու պետ Ջորջ Քերի Արքեպիսկոպոսի ընկերակցությամբ ներկա գտնվեց առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներում կռված անգլիացի զինվորներին նվիրված հոգեհանգստյան՝ արարողությանը, որի ընթացքում երկու Եկեղեցիների պետերը հատուկ աղոթք կատարեցին նաև 20-րդ դարի հայ նահատակների համար: Արարողությանը ներկա էին բազմաթիվ հավատացյալներ, պետական բարձրաստիճան և զինվորական պաշտոնյաներ:

Հոգեհանգստյան արարողության ավարտին, կեսօրվա ժամը 12-ին, Քենթրբերիի Մայր Տաճարում Անգլիկան Եկեղեցու Արքեպիսկոպոսը մատուցեց Սբ. Պատարագ, իսկ օրվա պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ «Վէմն, զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան» (ՂՈՒԿ. Ի 17) բնաբանով:

Քարոզից առաջ Անգլիկան Եկեղեցու Արքեպիսկոպոսը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այցը Քենթրբերի: Նա ընդգծեց երկու Եկեղեցիների միջև գոյություն ունեցող սերտ եղբայրությունն ու գործակցությունը, մասնավորապես Վեհափառ Հայրապետի ներդրումը միջեկեղեցական էկումենիկ կյանքում: Ավարտելով խոսքը, Արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի կուրծքը զարդարեց Անգլիկան Եկեղեցու բարձրագույն պարգևով՝ «ԼԱՄԲԵԹԻ ԽԱՉ» շքանշանով: Հայ Եկեղեցում այս պատվին արժանացել է նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը:

Իր հերթին Վեհափառ Հայրապետը Անգլիկան Արքեպիսկոպոսին շնորհեց Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանը: Պատասխան խոսքում Վեհափառը կարևորեց երկու Եկեղեցիների միջև տիրող բարեկամական հարաբերությունները ասելով.

«Ես դիտեմ, որ այն մեծ սերը, որ դուք միշտ արտահայտել եք Հայ Եկեղեցու հանդեպ, ամբողջապես փոխադարձվել է մեր կողմից ձեր և իմ նախորդների օրոք, և այսօր այն մի նոր խթան է ստանում մեր համագործակցության ձևերի որոնման մեջ՝ քրիստոնեական պատմության այս շրջանում, երբ Եկեղեցիների միասնական աշխատելը մեր վստահելիության միակ գրավականն է կյանքի ծայրահեղ աշխարհականացած հակումների ու շարժումների այս աշխարհում։ Եվ ուստի սա միայն պատմության հիշողություն չէ, այլ սա նաև, և մասնավորապես, պատմություն կերտում է։ Այս առումով ես ձեզ սրտիս խորքից շնորհակալություն եմ հայտնում այն բարձր պատվի համար, որ շնորհվեց ինձ Լամբեթի խաչով։ Ես սրա վրա գուրգուրալու եմ և այն համարելու եմ խոսուն նշան մեր հարաբերությունները շարունակելու և զարգացնելու հանձնառության, քանզի եթե մենք այդ քայլը չկատարենք, ես կարծում եմ, որ մենք հավատարիմ չենք լինի ո՛չ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, ո՛չ ավանդությանը մեր Եկեղեցիների, որոնք մշտապես ցուցաբերել են այդ էկումենիկ ոգին անցյալի իրենց հարաբերությունների մեջ։

Ինչպես որ դուք նշեցիք, որ մեր Եկեղեցին պաշտոնապես հիմնվել է 301–ին, Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, և մինչ մենք պատրաստվում ենք ողջ աշխարհի մեր քրիստոնյա եղբայրների և քույրերի հետ 2001–ին տոնելու 1700–ամյակը մեր Եկեղեցու հիմնադրության, ես կկամենայի Ձերդ սիրեցյալ եղբայրությանը շնորհել մեր Եկեղեցու բարձրագույն չքանչանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի անունով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՔԵՆԹԲԵՐԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՑ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

«Վէմն զոր անարգեցին չինողքն՝ նա եղև գլուխ անկեան» (ՂՈՒԿ. Ի 17)

«Այն վէմը, որ չինողները անարգեցին, նա է, որ անկյունաքարը եղավ»։ Այս բառերը այսօրվա Ավետարանի ընթերցվածի վերջին տողերն էին։ Ես այն մեջբերում եմ Revised Standard Version–ից։ Պատումն ինքնին այնքան պերճախոս է, որ կարիք չունի ավելի լայն մեկնաբանության։ Սակայն նախքան տեքստի մասին խոսելը, ես ինձ պարտավորված եմ զգում ձեզ՝ Անգլիայի Եկեղեցու եղբայրներին ու քույրերին, փոխանցելու իմ հայրենիք Հայաստան երկրի ձեր բարեկամ քրիստոնյաների ողջույնները։ Իմ խոնարհ անձի միջով նրանք ձեզ իրենց սերն են ուղարկում և ձեզ հետ կիսում են սերը, հավատը և հույսը, որ մենք բոլորս մեկ ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով և՝ այստեղ՝ Մեծ Բրիտանիայում, և՝ այնտեղ՝ Հայաստանում։ Այսօր ես նաև հոգով միանում եմ ձեզ՝ հարգանք ընծայելով նրանց, ովքեր իրենց կյանքը տվեցին ձեր և մեր կյանքի համար։ Թող նրանք հրճվեն երկնքում՝ տեսնելով մեր հավատարմությունն իրենց նվիրումի, իրենց հիշատակի և զոհաբերվելու իրենց կենսատու օրինակի հանդեպ։ Թող նրանց անունը հավերժ փառաբանվի Տիրոջ անվան հետ, ում հետ նրանք այսօր ապրում են երկնային օթևաններում։

Այժմ դառնանք այն առակին, որ մենք այս առավոտ կարդացինք եկեղեցում. այգու տերը երեք ծառաներ ուղարկեց՝ վարձակալներից իրենց վարձքը ստանալու։ Նրանք մերժեցին, նրանք վիրավորեցին ծառաներին և նրանց հետ ուղարկեցին։ Եվ ապա տերն ուղարկեց իր որդուն, և նրանք նրան սպանեցին։ Եվ, վերջապես, երբ իրեն հարցրեցին, թե ինչ է անելու, նա Սուրբ Գրքից՝ Սաղմոսներից այս բառերը մեջբերեց. «Այն վեմը, որ չինողները անարգեցին, նա է, որ անկյունաքարը եղավ»։ Որդին՝ որ մերժվեց, դարձավ անկյունաքար։ Սուրբ Գրքի շատ մեկնիչներ այս հատվածի մեկնության տարբեր ձևեր են առաջարկում։ Այդին աշխարհն է։ Տերը՝ ինքն Աստված։ Մենք աշխարհի տնտեսներն ենք և ոչ թե տերերը։ Եվ եթե մենք մերժում ենք այդու տիրոջ հեղինակությունը, մենք դավաճանում ենք մեր հավատարմությանը և ուստի մենք նույնիսկ մերժում ենք Նրան՝ սպանելով Իր Որդուն։

Ես անձնապես հավատում եմ, որ այդին Աստծո կալվածքն է։ Նա մեր՝ մարդկային էակներիս մեջ Իր պատկերն է դրոշմել, Իր արարչագործությունը վստահել է մեզ, որպեսզի մենք խնամենք և ոչ թե փչացնենք։ Եվ մենք տերերը չենք, սակայն փորձվում ենք լինելու և դառնալու տերերը, եթե մենք պատասխանատվություն կրենք այս աշխարհն արարողի հանդեպ։

Այսօր մեր ներկա քրիստոնեական իրավիճակում՝ իր ողջ գիտական արդյունաբերական տեխնոլոգիական մեծ նվաճումներով արտաքին տիեզերքում և ատոմական էներգիայի անտեսանելի աշխարհում, մենք փորձվում ենք դառնալու Աշխարհի Տերերը, կարծես թե աշխարհը մի բան է, որի հետ մենք կարող ենք վարվել մեր ուզածի պես։ Այստեղ է, որ մենք գտնում ենք այսօրվա աշխարհի ճգնաժամը։ Երբ արարածն իրեն դնում է արարչի տեղը, և ճգնաժամերից շատերը, որոնց միջով մենք անցնում ենք, հպարտության այդ առաջին մեղքի պտուղներն են, երբ մենք մեզ Աստծո տեղն ենք դնում, մենք մոռանում ենք մեր սեփական արարածությունը, մեր կախվածությունը, մեր պարտականությունը՝ որպես աշակերտներ։

Մենք մեր Տիրոջ կողմից կոչված ենք լինելու աշխարհի աղը՝ համաձայն Ավետարանի։ Եվ ես ինձ և ձեզ մի հարց եմ տալիս. Մենք ալ ենք կոչումով, սակայն այսօր մենք աղ ե՞նք գործունեությամբ՝ կյանքի և գործի միջոցով։ Մենք այնքան անտարբեր ենք դարձել մեր պարտականության և որպես քրիստոնյաներ աշխարհի մեջ մեր դերի զգացումի հանդեպ։ Մենք դարձել ենք, թույլ տվեք ասել ամենայն խոնարհությամբ, սակայն անկեղծությամբ, մենք դարձել ենք գաղջ քրիստոնյաներ և մենք չենք արտահայտում մեր Տիրոջ հանդեպ մեր նվիրումը այն դինամիկ ձևով, ինչպես առաջին քրիստոնյաներն էին արտահայտում։ Հաստատակամությունն այնքան ուժեղ է դարձել մեր մեջ, որ հին դարերի սովորությունները մեր վրայից վերցրել են իրենց տիրապետությունը, և Աստծո արարչագործությանն ուղղված մեր պատասխանի կենդանությունը նվազել է։ Մենք մոռացել ենք այն վեմի կենտրոնականությունը, որ Հիսուսի՝ Որդու անկյունաքարն է։ Մենք նրան համարում ենք երկանաքարերից մեկը, և դա մեր տկարությունն է։ Նա անկյունաքարն է, և ինչպես կարդում ենք Ս. Պետրոսի առաջին թղթում, մենք այդ հիմնաքարի վրա կառուցվելիք

կենդանի վեմերն ենք, և ես մեջբերում եմ անում Բ Գլխի 5-րդ համարից՝ «Մոտեցե՛ք նրան՝ կենդանի Վեմին, որ, թեպետ մարդկանցից անարգված, բայց Աստծո առաջ ընտրյալ և թանկագին է»։ Եվ եղեք կենդանի վեմերի նման՝ կառուցված հոգևոր տան մեջ, Սուրբ Քահանայություն՝ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին ընդունելի հոգևոր զոհեր մատուցելու։

Մեր հարցը, իմ սիրելի բարեկամներ, քույրեր և եղբայրներ, մեր հարցը վավերականության հարց է։ Որքանով ենք մենք վավերական մեր քրիստոնեական հավատքի մեջ։ Մենք այնքան ենք հարմարվել սեկուլյար հասարակության ներկայիս մարտահրավերներին կամ բնագավառներին, որ մենք որևէ տարբերություն չենք տեսնում մեր և մնացած աշխարհի միջև։ Աշխարհը Աստծո աշխարհն է։ Եվ ուստի մենք պետք է ավելի ճշմարտացի դառնանք այս աշխարհում մեր քրիստոնեական էության, մեր քրիստոնեական պատկերի նկատմամբ։ Եվ ես կկամենայի եզրափակել այս հատվածի համառոտ խորհրդածությամբ, որ եթե մենք կարողանանք մեզ ներդաշնակորեն դնել Քրիստոսի մարմնի մեջ, Տիրոջ Տան մեջ, որ Եկեղեցին է, համագործակցության էկումենիկ ոգով, ահա այստեղ է, որ աշխարհը մեզ հավատալու է։ Սակայն եթե մենք առաջ գնանք չեշտելով, ընդգծելով և նույնիսկ չափազանցնելով մեր ներքին բաժանումները, մենք անվստահելի մարդիկ կլինենք։ Հարցը միայն հավատալը, հավատացյալ լինելը չէ, այլ հավատալի հավատացյալ լինելն է մեր կյանքերի միջոցով մեր նվիրման որակի շնորհիվ թող Քրիստոսի խաղաղությունը ճառագայթի աշխարհում։ Եվ դա մեր այսօրվա կոչումն է։

Ես գալիս եմ ձեզ մոտ մի երկրից, մի ժողովրդից, որը դարեր շարունակ, ավելի քան 17 դարեր, փորձել է հավատարիմ մնալ իր քրիստոնեական ինքնությանն ու արժանապատվությանը աշխարհագրական մի տարածաշրջանում, աշխարհաքաղաքական իրավիճակում, որը երբեք էլ նպաստավոր չի եղել քրիստոնեական հավատքը ամուր պահելու համար։ Ես այսօր իմ սրտում ծնկի եմ գալիս Աստծո և ձեր առջև և գոհություն եմ հայտնում Նրան, որ Խորհրդային մարտնչող աթեիստական տիրապետության 70 տարիներից հետո հավատքը վերակենդանանում է։ Եվ Խորհրդային համակարգի կործանումն ինքնին ապացույց է, որ հավատքը դրսից աննվաճելի է, հավատքը կարող է պարտվել ներսից, եթե մենք նվազ հավատարիմ լինենք մեր քրիստոնեական իդեալներին։ Քրիստոնեության վրա որևէ այլ տեսակի հարձակում դրսից չի հաջողվելու, սակայն եթե այսօր հավատքի մեր տրտահայտության մեջ հավատարմությունը, վավերականությունը և թարմությունը ներքին առնվազում ունենան, այստեղ է, որ մենք կունենանք մեր հավատքը աշխարհում կորցնելու վտանգը։ Եկեք ուստի ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի դրվենք Տիրոջ Տան շենքի անկյունաքարի վրա, որը մարդիկ մերժեցին, սակայն մենք մեզ կառուցեցինք որպես կենդանի վեմեր Նրա վրա, որ մեզ նման դարձավ, որպեսզի մենք Նրա նման դառնանք կենդանի վեմեր՝ հանուն Հայր Աստծո և Իր փառքի, ժողովրդի բարօրության և այսօրվա աշխարհում քրիստոնյա Եկեղեցու վավերականության։ Թող Իր անունը փառաբանվի հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Օրվա երկրորդ կեսին Անգլիկան Արքեպիսկոպոսը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր պաշտոնական ճաշկերույթ,

որին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, պետական գործիչներ, նրանց թվում նաև՝ Քենթրբերիի քաղաքապետը: Հայ համայնքից հրավիրվել էին Մայր Աթոռի բարերար Ջորջ և Դայանա Քյուրջյանները:

Հանդիպման ընթացքում Ջրքեպիսկոպոս Ջորջ Քերին և Վեհափառ Հայրապետը վերստին շեշտեցին երկու Եկեղեցիների սերտ գործակցության կարևորությունը:

Իր խոսքում Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց Քենթրբերիի Արքեպիսկոպոսին այսքան ջերմ ընդունելության համար և ցանկություն հայտնեց առաջիկայում հյուրընկալել նրան Սուրբ Էջմիածնում: Վերջում Նորին Սրբությունը, ի գնահատություն Ջեֆրի Ռովել եպիսկոպոսի, վերջինիս կուրծքը զարդարեց հայկական ականակուռ լանջախաչով, ինչպես նաև հանձնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից տարած այլ հուշանվերներ:

Հայոց Հայրապետը Սուրբ Էջմիածնի պատկերով մի բյուրեղապակյա ծաղկաման նվիրեց նաև Ռիչարդ Մարշին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 10-ին, առավոտյան ժամը 11-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, իր հավատավոր հոտին այցելություն տալու նպատակով, ժամանեց Լոնդոնի Սբ. Սարգիս հայկական եկեղեցի:

Վեհափառ Հայրապետին և Գերաշնորհ Արքեպիսկոպոսին դիմավորեցին լոնդոնահայ համայնքի հավատացյալները՝ թեմի առաջնորդ Եղիշե արք. Կիսիրյանի և եկեղեցու հովիվ Շնորհք քհն. Բաղդասարյանի գլխավորությամբ:

Գոհաբանական աղոթքից հետո ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով Անգլիկան Եկեղեցու Պետին՝ ջերմ և եղբայրական ընդունելության համար.

«Ձերդ Գայծառափայլություն, Ամենապատվելի Արքեպիսկոպոս Քենթրբերիի Դոկտոր Ջորջ Քերի, եպիսկոպոս Ջեֆրի, Ռիչարդ Մարշ, բարեկամներ.

Փառք և գոհություն երկնավոր Հորը, որ տվեց ինձ այս հնարավորությունը՝ մեկ անգամ ևս ձեզ հետ միասին գտնվելու այս եկեղեցում, որտեղ հաճախ ես աղոթել եմ և որտեղից մտադիր եմ սկսել իմ առաջին հովվապետական այցելությունը Բրիտանիայի մեր հայ համայնքին ու այդ երկրի բնակչությանը՝ փորձելով հաղորդակցվել մարդկանց հետ, լսել նրանց, զրուցել նրանց հետ:

Հոգևոր հովիվը, պատասխանատվության ինչ աստիճանի էլ որ նա կանչված լինի անկարող է իրագործել իր առաքելությունը, մինչև որ հասու

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ԹԵՆԳԱՐԵՐԻՆ ՍՐԲԵՊՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ
ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻՆ

չինի ժողովրդի կարիքներին, ձգտումներին, ցանկություններին, խնդիրներին, երազանքներին: Սակայն սույն այցելությունը, զուտ հովվապետական այցելությունից զատ, ունի նաև այլ նշանակություն: Այս այցելությունը համընկնում է Անգլիայի Անգլիկան եկեղեցուն և այդ եկեղեցու Պետին՝ մեր ի Քրիստոս եղբորը՝ Դոկտոր Ջորջ Քերիին տված իմ անդրանիկ այցելության հետ: Մենք անցկացրեցինք միասին չորս օրեր Լամբեթում, Օքսֆորդում, Քենթրբերիում: Մեր բոլոր հանդիպումների ընթացքում մենք անկեղծորեն կիսել ենք մեր մտահոգություններն ու հոգսերը աշխարհի և նրանում ապրող մարդկանց մասին: Այսօր եկեղեցիները կոչված են այնպիսի պատասխանատվության, որը առանձին-առանձին չեն կարող իրագործել, քանի որ այն խնդիրները, որոնց այսօր դիմագրավում են մարդիկ, ոչ թե անգլիական կամ հայկական, կամ էլ կաթոլիկ կամ ուղղափառ բնույթի են, այլ համամարդկային, և մենք կարող ենք արձագանքել նրանց ձգտումներին միասնաբար գործակցելով: Եվ այդ միասնականությունը և հասարակաց հանձնառությամբ համախմբվածությունն առ մեր Տեր Հիսուս Քրիստոս հենց այն է, ինչն էլ հանդիսանում է իսկական էկումենիզմի ուղն ու ծուծը: Ուստի, Ձերդ Պայծառափայլություն, քանի որ մեր այցելությունը Անգլիայի Եկեղեցուն և Ձեզ՝ նրա Պետին, մոտեցել է ավարտին, և սկսվելու է մեր այցելությունը Հայ Համայնքին, կկամենայի, օգտվելով հնարավորությունից, ի խորոց սրտի երախտագիտություն հայտնել ձեզ՝ սիրալիրության և այն զգացման համար, որ ձեզ հետ լինելիս ես ազատ զգացի, ինչպես տանը: Պետք է խոստովանեմ, որ իմ մեջ որոշ անգլիկան տարր կա: Եվ պետք է դա խոստովանեմ ուրախությամբ ու հպարտությամբ, քանի որ օգուտ եմ քաղել Անգլիկան եկեղեցու հետ շփման փորձառությունից դեռևս այն ժամանակ, երբ ուսանող էի, և հետո, երբ մի քանի անգամ այցելեցի Անգլիա, ունեցա նաև մի քանի շփումներ Անգլիկան եկեղեցու թեմերի հետ աշխարհի այլ մասերում:

Այսօր մենք հանդել ենք մի եզրակացության և մտադիր ենք միասնաբար դիմել աշխարհին և հրապարակել մի համատեղ հայտարարություն թե՛ բրիտանական և թե՛ հայ ժողովրդի անունից, որպեսզի մարդիկ իմանան, որ մեր միասնությունը ձևական չէ, այլ հասարակաց հանձնառություն հանուն Քրիստոսի, որին մենք հետևում ենք և կհետևենք, քանի դեռ Աստված մեզ ուժ կտա մեզ վստահված առաքելության ճանապարհին՝ մեր հայ և բրիտանացի ժողովուրդների հոգևոր և բարոյական բարեկեցության համար: Հետևաբար, այդ ոգով էլ շնորհակալություն եմ հայտնում ձեզ այն ամենի համար, ինչ դուք արեցիք: Ես կկրեմ այն խաչը, որ դուք ինձ նվիրեցիք ի նշան սիրո: Ես միշտ հպարտ կլինեմ, որ այն ամենն, ինչ ես արել եմ Անգլիայում կրթությանս և ծառայությանս համար, պսակվեց Անգլիկան եկեղեցու պետի կողմից գնահատանքի նման արտահայտությամբ: Թող Աստված օրհնի այդ եկեղեցին: Ես շնորհակալություն եմ հայտնում ձեր բոլոր գործակիցներին և ձեր տիկնոջը, որն ինձ վերաբերվեց ինչպես ընտանիքի բարեկամին: Ձեր ժողովրդին մաղթում եմ լավագույնը: Թե՛ այստեղ և թե՛ Սբ. Էջմիածնում իմ աղոթքներում, խոհերում և գործերում ես միշտապես կհիշեմ Անգլիայի եկեղեցին: Թող Աստված օրհնի ձեզ»:

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո Ռիչարդ Մարշը ընթերցեց Վեհափառի այցելության առթիվ կազմված՝ Վեհափառ Հայրապետի ու Քենթրբերիի Արքեպիսկոպոսի համատեղ հայտարարությունը, որը պաշտոնապես սաւորագրվեց եկեղեցու Ս. Խորանի վրա:

JOINT COMMUNIQUE BETWEEN HIS GRACE THE ARCHBISHOP OF CANTERBURY AND HIS HOLINESS KAREKIN I, SUPREME CATHOLICOS OF ALL ARMENIANS

10TH NOVEMBER 1997

At the invitation of His Grace The Archbishop of Canterbury, His Holiness Karekin I, Supreme Catholicos of All Armenians, visited London, Oxford and Canterbury between 6th and 10th November 1997. His Holiness had been a student in England in the 1950's. At the end of this visit, His Grace and His Holiness issued the following communiqué:

During this historic visit we have had the opportunity to pray and to talk together, we have been mindful not only of the long-standing relationship between the Armenian Apostolic Church and the Anglican Communion, but also of the new situation that now exists in the independent Republic of Armenia- a cause of great joy.

Our thoughts and discussions have turned towards our hopes for the deepening relations between our two churches around the world and our common commitment to the mission of Christ's Church in conformity to His command to baptise and make disciples of all nations (Matthew 28:19).

We give thanks for our theological discussions, especially those of the Anglican/Oriental Orthodox International Forum. We hope that building on the work of this forum and that of other ecumenical dialogues we will soon be able to reach a consensus indicating substantive convergence on the formerly divisive Christological issue.

We give thanks for the close relationships between provinces of the Anglican Communion and the Armenian Apostolic Church throughout the world and encourage the deepening of these relationships in life and witness at the local level.

We recognise that all churches are faced with common challenges in an increasingly secular culture, and we commit ourselves to bilateral discussions and work together where possible on these issues. Further we commit ourselves to developing partnerships and sharing resources and insights particularly in Christian education, sector ministries and chaplaincies and other similar areas.

We rejoice that we have had the opportunity to meet and pray together. Especially we were privileged to join together on Remembrance Sunday in common prayer for the victims not only for the dead of all wars, but in particular for the victims of the Armenian Genocide. In faithfulness to the saints and

martyrs who have gone before us and mindful of the dawning of the third Christian millennium and the 1700th anniversary of the foundation of Christianity in Armenia in 2001, we recommit ourselves and our Churches to the search for Unity in Christ, our Resurrection and our Life.

+George Cantuar

ARCHBISHOP OF CANTERBURY

Karekin I

KAREKIN I
SUPREME CATHOLICOS OF
ALL ARMANIANS

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՔԵՆԹԵՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նորին Գերազանցություն Քենթրբերիի Արքեպիսկոպոսի հրավերով Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1997 թ. 6-10-ը այցելեց Լոնդոն, Օքսֆորդ և Քենթրբերի: 1950-ական թվականներին Նորին Սրբությունը ուսանելիս է եղել Անգլիայում: Այս այցելության ավարտին Քենթրբերիի Արքեպիսկոպոսը և Նորին Սուրբ Օծությունը հրապարակեցին հետևյալ համատեղ հայտարարությունը:

Սույն պատմական այցելության ընթացքում մենք հնարավորություն ենք ունեցել միասին աղոթելու և զրուցելու՝ ի մտի ունենալով ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Անգլիկան Եկեղեցու մեծ ընտանիքի երկարատև բարեկամական փոխհարաբերությունները, այլև այն նոր իրավիճակը, որը, ի մեծ ուրախություն մեզ, այժմ առկա է անկախ Հայաստանի Հանրապետությունում:

Մեր մտորումներն ու քննարկումները ներշնչեցին այն հույսերը, թե մեր երկու Եկեղեցիների միջև փոխհարաբերությունները ավելի ևս կխորանան համայն աշխարհում, և թե մեր հասարակաց հանձնառությունը Քրիստոսի Եկեղեցու առաքելության հանդեպ ավելի ևս կամրանա համաձայն նրա պատվիրանի՝ մկրտել և աշակերտել բոլոր ազգերին (Մատթեոս ԻԸ 19):

Մենք գոհություն ենք հայտնում մեր աստվածաբանական քննարկումների և հատկապես Անգլիկան և Արևելյան Ուղղափառ միջազգային ֆորումի քննարկումների համար: Հույս ունենք, որ, շարունակելով այդ ֆորումը և այլ էկումենիկ երկխոսությունները, շուտով ի վիճակի կլինենք հասնելու համախոհության՝ նշելով մերձեցում՝ նախկինում բաժանումների պատճառ հանդիսացող քրիստոսաբանական հարցի շուրջ:

Գոհություն ենք հայտնում այն սերտ փոխհարաբերությունների համար, որ գոյություն ունեն Անգլիկան մեծ ընտանիքի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերի միջև ողջ աշխարհում, և քաջալերում ենք այդ փոխհարաբերությունների խորացումը Եկեղեցու կյանքի և վկայության մեջ տեղական մակարդակով:

Մենք ընդունում ենք, որ բոլոր եկեղեցիներն էլ դիմագրավում են համընդհանուր մարտահրավերներ և դժվարություններ օրեցօր աճող աշխարհիկ քաղաքակրթության և մշակույթի միջավայրում: Պարտք ենք համարում կազմակերպել երկկողմանի քննարկումներ և միասին գործել այս հարցերի հաղթահարման ուղղությամբ, ըստ ընձայված հնարավորության: Ավելին՝ մենք պարտավորություն կստանձնենք զարգացնել գործակցությունը և կիսել մեր միջոցները, հնարավորությունները և ներըմբռնումները մասնավորապես քրիստոնեական դաստիարակության, հոգևոր սպասավորության, մասնագիտական ծառայության և նմանատիպ այլ բնագավառներում:

Մենք երջանիկ ենք, որ հնարավորություն ենք ունեցել հանդիպել և միասնական աղոթք կատարել: Մենք մասնավոր հաճույքն ունեցանք միասին լինելու և Ննջեցելոց Հիշատակի Կիրակիին միասնաբար աղոթելու ոչ միայն այն զոհերի համար, որոնք զոհվեցին բոլոր պատերազմների ընթացքում, այլև աղոթելու Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ի հավատարմություն այն սրբերի և նահատակների, որոնք ապրեցին մեզանից առաջ՝ հիշելով, որ արշալույսն է Քրիստոնեության երրորդ հազարամյակի և 2001 թ. Հայաստանում Քրիստոնեության իբրև պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի, մենք իրկին վերընծայում ենք մեզ և մեր եկեղեցիները ի Քրիստոս Միության, ի մեր Հարության և ի մեր Կյանքին:

ՋՈՐՋ ՔԵՐԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

Ավարտելով իր այցելությունը Անգլիկան Եկեղեցուն, Վեհափառ Հայրապետը սկսեց իր անդրանիկ հովվապետական այցելությունը Մեծ Բրիտանիո հայ համայնքին:

Պաշտոնական այցելության վերջում, ի պատիվ Նորին Սուրբ Օծության, տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որին ներկա էին Անգլիկան Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնատար այրեր, ակգային բարերարներ:

«ՀՐԱՇԱՓԱՌ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Ս. Սարգիս եկեղեցում «Հրաշափառ»-ի արարողությամբ սկսվեց Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունը լոնդոնահայ համայնքին: Ներկա էին հայ համայնքի մշակութային և բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնական այլ անձինք:

Բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկավ Առաջնորդ Եղիշե արք. Կիպիրյանը՝ ներկայացնելով Վեհափառ Հայրապետի այցելության նպատակը: Ապա Առաջնորդ Սրբազանը հրավիրեց Հայոց Հայրապետին՝ իր օրհնության խոսքն ուղղելու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը անգլերենով ողջունեց հյուրերին, ապա ոգեշունչ խոսքով խանդավառեց ներկաներին՝ ի մասնավորի շեշտելով, որ Հայոց հինավուրց աշխարհը բազմաթիվ փորձություններով է անցել, սակայն միշտ էլ պատվով ու փառքով է դուրս եկել յուրաքանչյուր ճգնաժամից, որ թելադրել են ճակատագիրն ու պատմությունը: Այսօր մեր ժողովուրդն ապրում է վերապարթոնքի ու վերածաղկման այն ժամանակաշրջանը, երբ իր վավակները, ազգի հարատևության կոհասեղանին դրած սեփական կյանքը, մաքառում են գեղեցիկ ապագայի կերտման համար: Կարևոր չէ, թե մեր Եկեղեցու վավակները աշխարհի ո՞ր ծագում են ապրում: Գովելի է այն հանգամանքը, որ նրանք միասին, միակամ և համաժամանակյա են բռունցքում իրենց կարողությունները՝ ապրելու իրավունքը վտանգված սեփական ժողովրդի բարօրության համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

Սիրելի Առաջնորդ Սրբազան,
Հոգևորական Եղբայրներ,
Թեմական իշխանության ներկայացուցիչներ և
Թանկագին զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո,

Իմ խոսքը ձեզի ուղղելեն առաջ, ես սրտի պարտք կզգամ իմ շրթներես դուրս եկող բառերը դեպի երկինք առաքելու և գոհություն, շնորհակալություն և երախտագիտություն հայտնելու առ Բարձրյալն Աստված, որ ինձի շնորհեց հոգելից այս պահը, գոտեպնդիչ այն հանդիպումը, որ ես ահա կունենամ Անգլիո մեջ ապրող մեր հավատացյալ ժողովուրդին հետ:

Ունէ հոգևորական երկու նայվածք ունի, մեկը՝ դեպի երկինք ուղղված է, և մյուսը՝ դեպի երկիր, մեկը՝ դեպի Աստված, և մյուսը՝ դեպի ժողովուրդը, որովհետև հոգևորականը կամուրջն է երկինքի և երկրի միջև, կապն է Աստուծո և ժողովուրդին միջև: Հետևաբար, ես փառք և գոհություն կուտամ երկնավոր Հորը, որ այս պահը ընծայեց ինձի, որ ըլլամ թարգմանը Աստուծո մեր Եկեղեցվո մեջեն, մեր Եկեղեցվո հայրերու սուրբ ավանդներեն, մեր Սրբություն Սրբոց, մեր բոլորի անխտիր, բոլոր հայերու՝ ազգային սրբազան ավազանեն մկրտության, որ Սուրբ Էջմիածինն է, ուր մեր ազգը ծնավ իբրև քրիստոնյա ազգ 1700 տարիներ առաջ, որ ես կսիրեմ կոչել հայոց ազգի Բեթղեհեմը: Հայկական Բեթղեհեմն է Ս. Էջմիածինը, ուր մենք առաջին անգամ թագավորով և եկեղեցվո առաջնորդով քրիստոնեությունը պաշտոնապես ընդունեցինք որպես մեր ազգի կրոնը:

Եվ այսօր, այս ազոթքի զգացումով, առ Աստված կողջունեմ ձեզ բոլորդ, և կհայտնեմ ձեզ բոլորիդ, որ զգաք բոլորդ, յուրաքանչյուրը իր պատասխանատվության շրջագծին մեջ, յուրաքանչյուրն իրեն հատուկ ձևով և չափով,

յուրաքանչյուրդ զգա, որ մենք այսօր պատմության մեջեն կանցնինք նոր դարաշրջանի մը ճանապարհով:

Բոլորդ էլ գիտեք, որ ես հյուրն էի Անգլիկան մեծ Եկեղեցու պետին՝ Քենթբերիի Արքեպիսկոպոս և իմ սիրեցյալ եղբայր Ջորջ Քերիին: Մենք չորս օրեր անցկացրինք միասին, խոսակցեցինք և խորհրդակցեցինք այսօրվա աշխարհում տիրող երևույթների և մեր Եկեղեցիների ու ընդհանուր Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացման ու զարգացման մասին: Եվ մեր այցելության վերջում այս ոգով առաջնորդված այս սուրբ եկեղեցու խորանի վրա մի հայտարարագիր ստորագրեցինք, որով մեր բարեկամության և համագործակցության վկայությունը տվեցինք: Այցելեցինք նաև Մեծ Բրիտանիո գահակալին՝ Նորին Վեհափառություն Եղիսաբեթ Բ թագուհուն, որը շատ մտերիմ հետաքրքրություն ցուցաբերեց մեր Եկեղեցու և Հայրենիքի նկատմամբ: Լսեցի նաև բազմաթիվ բարի վկայություններ հայության մասին և հոգով զվարճացած այսօր սկսում եմ իմ անդրանիկ հովվապետական այցելությունը ձեզ՝ Մեծն Բրիտանիո մեր սիրելի, հարազատ և հավատարիմ ժողովրդին:

Ես եղած եմ այստեղ տարիներ-տարիներ առաջ, բայց այսօր չեմ և չեմ կրնար ըլլալ այն անձը, որ էի ասկե առաջ: Ձեզմե ոչ ոք, եթե անկեղծորեն հայ է և ճշմարտորեն քրիստոնյա է, չի կրնար մնացած ըլլալ այն, ինչ որ էր տասը տարիներ առաջ, որովհետև հայ ժողովուրդի պատմական վշտերուն, անկումներուն և վերականգնումներու շղթային վրա, հանկարծ լուսավոր օր մը բացվեցավ, և մեր հայրերու երազը, մեր նահատակներու կտակը կյանք առավ, մեր ըլլորի Մայր Հայաստանը վերագտավ իր ազատությունը և անկախությունը, որուն սպասումը մեր ժողովուրդը կպահեր իր ինքնության գիտակցությանը մեջ ամուր: Հետևաբար եկեք բոլորս ալ, մեր հոգիներուն մեջ, ծունկի գանք Աստուծո առջև և ըսենք՝ փա՛ռք Քեզ, Աստված, երրորդ հազարամյակը կբացվի նոր արշալույսով մեր հայոց դարավոր պատմության մեջ: Կզգա՞ք, կզգա՞ք այս հեղաշրջության հիմնական փոփոխության ազդեցությունը, ներգործությունը, հրաշակերտությունը ձեր հոգիներուն մեջ: Եթե չեք զգար, ափսոս, կնշանակե քայլ չեք պահեր հայոց պատմության հետ:

Փա՛ռք Քեզ, Աստված, կաղոթենք Քեզի, որ այնպես ընես, որ այս Հանրապետությունը դառնա ամուր, արմատներով խորունկ, զարգացումով հառաջընթաց, որպեսզի մենք մտնենք հազարամյակը պայծառ ճակատով և աշխարհի մեջ մեր ազգային ինքնության հստակ ըմբռնումով և պետական ինքնարտահայտության ոճով, որ այսօր ազգերու համար շատ կենսական պայման մըն է՝ իրենց ներկայությունը զգացնելու համար աշխարհին:

Սիրելի հավատացյալներ, Աստված իմ խոնարհ, համեստ և տկար անձիս մեծ պատիվ մը բրավ, ես Կաթողիկոս ընտրվեցա Ամենայն Հայոց Գահին վրա, ի Սուրբ Էջմիածին, առաջին անգամ ըլլալով, երբ ազգա[illegible] [illegible] Հանրապետություն մը դարձած էր մեր Մայր Հայրենիքը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը այլևս ազատ կեդրոն է, ուրկե 17 դարեր, 1700 տարիներ ձեզի կնային, որպեսզի Քրիստոսի [illegible], մեր Սուրբ հայրերու ավանդությունները հիշատակ չմնան ապցյալի, այլ դառնան ներգործող ուժ մեր այսօրվան և մեր գալիքին: Ես որ այժմ, ահավասիկ շուրջ

երկու տարիներեն ի վեր, Հայաստան կապրիմ, կզգամ, որ մեր ժողովուրդը անցնող տարիներին վարժվեցավ Հայոց Եկեղեցիին նայելու իբրև անցյալի ժառանգություն:

Հուշարձան էին եկեղեցիները, բայց Էջմիածինը հուշարձան չէ, անցյալը հիշեցնող կոթող մը չէ, թանգարան մը չէ, կյանք մըն է, առաքելություն մըն է, ժողովուրդի մեջ Աստված թարգմանելու կոչված ամենասուրբ և ամենանվիրական կեդրոն մըն է: Եթե երբեք այսօր, մեր ազատ ու անկախ պայմաններու տակ, մեր Մայր Աթոռը իր մայրական կաթը պիտի չտա մեր ժողովուրդին և միայն անցյալի հուշարար ըլլա, մեզի համար մեծ նշանակություն չունի, որովհետև ազգ մը, ուր ալ ըլլա և ինչ որ ալ ըլլա, եթե միայն անցյալով ապրի, դատապարտված է մահվան: Անցյալը պիտի չմոռնա, բայց անցյալեն նոր ուժ պիտի քաղե, այսօրը պայծառացնելու և վաղը առավել ևս ծաղկեցնելու նախանձախնդրությամբ, ոգևորությամբ և ազգային վճռական քաղաքականությամբ: Մենք այլևս կրավ, կրավ, արչափ ետև նայեցանք:

Մեր հայրերով ինքզինքնիս մխիթարեցինք. ի՞նչ պիտի ընենք մենք հիմա, այս է հարցը, ոչ թե ինչ ըրած են մեր հայրերը, մենք անոնցմե բան մըն ալ չենք կրնար փոխել, լավ կամ գեշ: Բայց դուք Աստուծո պիտի նայիք, ոչ թե ձեր հայրերու հաշվույն, այլ ձեր հաշվույն:

Այսօր, երբ իմ առաջին խոսքս կուղղեմ ձեզի և կ՚ուզեմ իմ խոր շնորհակալությունները հայտնել ձեր Առաջնորդ Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյանին, Թեմական Խորհուրդին և Եկեղեցական դասին ու բոլոր կազմակերպություններուն, որոնք ազնվությունը ունեցան մեզ հրավիրելու և ժողովուրդին հետ հաղորդության մեջ դնելու:

Իմ հոգևոր ծառայության մեջ ես ժողովուրդին հետ հաղորդությունը կնկատեմ կենսական նախապայման: Այն հոգևոր կամ քաղաքական առաջնորդը, որ իր ժողովուրդը չի ճանչնար, չի կրնար այդ ժողովուրդին ծառայել այն արդյունավորությամբ, ինչ որ կսպասվի: Ես չեմ ուզեր, որ աշխահի չորս ծագերուն տարածված մեր թեմերու ժողովուրդը ինձի համար ըլլա սոսկ թուղթի վրա նշված: Ես կուզեմ զգալ երակներուս մեջ այն, ինչ կզգա մեր ժողովուրդը: Եվ այսօր ես եկած եմ որպես Աստուծո խոնարհ ծառաներեն մեկը, մեր Եկեղեցվո առաջին սպասավորը, որպեսզի ճանչնամ ձեզ, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, և նաև ճանչցվիմ ձեզմե, որպեսզի հաղորդություն ըլլա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մեր ժողովուրդին միջև, և կուզեմ, որ հառաջիկա մի քանի օրերը, երբ հոս պիտի ձեզի հետ ըլլամ, առիթներ ըլլան բոլորիս անխտիր վերանորոգման:

Այս է իմ հովվապետական այցելության նպատակը: Եկեք զայն ընենք պատմական այնպիսի գեպք մը, որ երբ մեկնիմ այստեղեն, չըլլաք այն, ինչ որ էիք իմ գալես առաջ, և ոչ ալ ես ըլլամ այն, ինչ որ էի իմ գալես առաջ: Թող վերանորոգության, վերածաղկումի գարնան շունչը տարածվի Մեծն Բրիտանիոյ մեջ ապրող մեր հայության մեջ, ինչպես նաև ուրիշ երկիրներուն մեջ և այլ վայրեր, ուր կապրին հայ ժողովուրդի զավակները:

Թող Աստուծո շունչը, մեր հայրերու հավատքը, մեր հայրենիքի սերը դառնան երրորդություն: Աստուծո հավատքը, Եկեղեցվո սերը և հայրենիքի պաշտամունքը, ահավասիկ ինչ որ բերած եմ ձեզի մեր Մայր Հայրենիքեն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն, Հանուն Աստուծո և Հանուն Ազգին, Հավիտյանս Հավիտենից, Ամեն:

Անդրանիկ հանդիպումը հոր և կավակների միջև ավարտվեց աջահամբույրով, հավարտ որի Ս. Սարգիս եկեղեցու երիցատանը տեղի ունեցավ փոքրիկ հյուրասիրություն, որին ներկա էին մեծ թվով հյուրեր. ազգայիններ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 11, ԵՐԵՔՇԱԲԹԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՉԵՍՏՐ

Երեքշաբթի օրը, նոյեմբերի 11-ին, Վեհափառ Հայրապետը. Մեծ Բրիտանիոյ հայոց Առաջնորդ Եղիշե արք. Կիպրիանի, Կանադահայոց Առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի և Բագրատ աբդ. Գալստյանի ուղեկցությամբ, մեկնեց Մանչեստր՝ տեղի հայ համայնքին տալու իր անդրանիկ հովվապետական այցելությունը:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել տեղի Սբ. Երրորդություն Հայ եկեղեցու հոգաբարձության աւագապետ տիար Թադեոս Քուլիկյանը և մի խումբ ազգայիններ:

Փոքրիկ հանգստից և տեղի վարչական պատասխանատուների հետ ունեցած զրույցից հետո, երեկոյան, Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Սբ. Երրորդություն եկեղեցի, ուր Նորին Սրբության գալստյանն էր սպասում գրեթե ողջ մանչեստրահայությունը:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո, բարիգալստյան խոսքով հանդես եկավ Եղիշե արք. Կիպրիանը, ապա ժողովրդին իր ողջագալը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

Վեհափառ Հայրապետն իր ոգեշունչ խոսքով կոչ արեց բոլորին՝ կապվել Հայրենիքի հետ, Սբ. Էջմիածին ուխտագնացությամբ հոգևոր կյանքը առաջնորդել վերապարթոնքի:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՆՉԵՍՏՐԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի առաջնորդ սրբազան, հոգևոր եղբայրներ, հարգելի ներկաներ և բարեկամներ, ազգայիններ, մեր ժողովուրդին մեջ կամավոր ծառայության հանձնառությունը ստանձնած սիրելի ներկայացուցիչներ բոլոր կազմակերպությունների.

Ես նախ կուզեմ փառք տալ Աստուծո, որ ինձի չնորհեց այս առիթը, որ ես անգամ մը ևս ըլլամ այս երկրին մեջ Անգլիո և հաղորդակից դառնամ այստեղ ապրող և իր հայությունը արժեցնող մեր ժողովուրդի ավակներուն հետ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև և Առաջնորդ սրբազանի, թեմական խորհրդի և համայնքային բոլոր կազմակերպությանց նվիրյալ աշխատանքներու բարիքներով:

Ինձի համար Անգլիան բոլորովին նոր երկիր չէ, բոլորդ ալ գիտեք, բայց նորը այն է, որ ես կուգամ մեր նոր Հայաստանեն, նորը այն է, որ ես կուգամ նորոգյալ մեր Սուրբ Աթոռ Էջմիածնեն: Երկիրները նույնն են, բայց ժողովուրդները փոխված են, կացությունները փոխված են, և կուգամ ձեզի նոր պատասխանատվությամբ, շատ ավելի ծանր պատասխանատվությամբ, քան ինչ որ եկած էի ասկե առաջ:

Ասկե 40 տարիներ առաջ իմ երջանկահիշատակ նախորդը այցելած է

Մանչեստրի այս փոքրիկ գաղութը, և ես ցանկացա անպայմանորեն վերանորոգել ձեր կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, որ բոլորովին տարբեր է այսօր, քան ինչ որ էր 40 տարիներ առաջ: Եթե կտրվի շղթան մեր Մայր Եկեղեցու և Մայր Հայրենիքի հետ այս օտար-ամայի ճամփեքի վրա, մենք կկորցնենք մեր իսկատիպ հայկական նկարագիրը, և կյանքը կվերածվի անսնուգ և անհաղորդ մի կյանքի մեր հայության և քրիստոնեական հարազատ նկարագրին չհամապատասխանող:

Ասկե առաջ եկած էի Անգլիա, գիտեք, որ այստեղ եմ ստացել իմ համալսարանական կրթությունը և սերտ հարաբերություններ եմ ունեցել Անգլիկան եկեղեցու ներկայացուցիչների հետ: Սակայն այսօր կուզամ ձեզի իբրև ձեր հոգևոր հայր, այն անձը, որ ամենեն ծանր պատասխանատվությունը ստանձնած է այսօր Աստուծո կամքով և մեր ժողովուրդին ընտրությամբ, մեր նոր ժամանակներու մեջ, մեր պատմության այս նոր դարաշրջանի սկիզբը՝ մեր եկեղեցին առաջնորդելու համար, բոլոր մեր հոգևոր և աշխարհական գործակիցներով, դեպի այն հորիզոնները, ինչ որ Աստված կուզե, որ երթանք, ինչ որ պատմությունը կպահանջե մեզմե, որ երթանք և ինչ որ մեր խիղճը մեր վրա պարտք կդնե, որ երթանք դեպի հայոց առավել պայծառ ապագան:

Այսօր կուզեմ, որ իմ թարգմանն ըլլաք այն գաղափարին, որ այս օրերուն մեր ժողովուրդի ընդհանուր կարգախոսը կըրնա ըլլալ միայն և միայն աշխարհին ներկայանալ իբրև մեկ ուժ, մեկ ազգ և մեկ եկեղեցի, որովհետև կանցնինք շատ վճռական, որոշադրիչ շրջանեն:

Վեց տարին անցավ մեր Հանրապետության, բայց գալիք տարիները ի՞նչ կըրնան ըլլալ, հորիզոնին վրա դեռ ամպեր կան, բայց մենք պիտի գիտակցինք, որ այս ամբողջությամբը, մեկ հայությամբը պիտի արժեցնենք մեր ձայնը և՛ եկեղեցականորեն, և՛ աշխարհականորեն, և՛ քաղաքականորեն, և՛ պետականորեն մեր գալիք սերունդներու համար: Կուզեմ, որ դուք իմ թարգմանը հանդիսանաք, և այս ոգիով ձեռք-ձեռքի տված, սիրտ-սիրտի կապած շարունակենք այս նվիրական առաքելությունը, և ապագա սերունդները կօրհնեն մեզ՝ փոխանակ անիծելու:

Խոսքս փակելուց առաջ կուզեմ իմ հայրապետական գնահատանքը հայտնել մեր սիրելի Առաջնորդ սրբազանին, որ այսպես անտրտունջ կերպով շեն է պահում այս փոքրիկ, բայց համախումբ, միակամ և միասիրտ գաղութը: Կտեսնեմ, որ եկեղեցին շատ պայծառ, փայլուն և գեղեցիկ վիճակում է. Ապրիք: Եկեղեցու այս վիճակը լավագույն վկայությունն է ձեր կյանքի: Այն հայելի է, որի մեջ յուրաքանչյուրս մեզ կտեսնենք՝ դա մեր հոգու արտահայտությունն է: Կգնահատեմ ձեզ բոլորդ և կուզեմ, որ այս աշխույժ ոգով և նվիրումով շարունակեք ձեր կյանքը՝ գործը՝ ձեր մասնակցությունն ու զորակցությունը բերելով նաև մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ազատ ու անկախ Մայր Հայրենիքի վերաշինության գործին:

Վեհափառի խոսքից հետո տեղի ունեցավ աջահամբույր, ապա ներկաները ուղևորվեցին Նորին Սրբության իջևանած հյուրանոց, որտեղ համայնքը ընթրիք-հանդիպում էր կազմակերպել ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրված պաշտոնական ճաշկերույթն ավարտվեց գեղարվեստական փոքր մի հայտագրով, որից հետո

ելույթ ունեցան Անգլիայի և Կանադայի հայոց թեմերի Առաջնորդները. տիար Թադեոս Քուլիկյանը և Հայաստանում Անգլիայի նախկին դեսպան պրն. Դեյվիդ Միլերը: Վերջում ներկաներին իր պատգամը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը երկչեկու ճառով բացառիկ խանդավառության մթնոլորտ ստեղծեց ներկա հավատացյալների մոտ՝ շեշտելով Հայաստանի և Սբ. Էջմիածնի հանդեպ հայ քրիստոնյաներից սպասվող բարոյական և նյութական ներդրումների անհրաժեշտությունը՝ Մայր Հայրենիքի և Հայոց Եկեղեցու վերակարգոնքի նպատակով:

«Եկեղեցին պետք է վերածել շարժումի և հարկ է այլևս փոխել անոր տրված քարացած հաստատության նկարագիրը», - ասաց Վեհափառ Հայրապետը ներկաներին դիմելով. «Պատմությունը ճամփորդություն մըն է, որուն մեջ բոլորս պետք է ըլլանք շարժման մղիչներ ու ստեղծագործող ոգեղեն ներկայություն»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց մանչեստրահայության եկեղեցական վարչության ատենապետ պրն. Թադեոս Քուլիկյանին, իր երկար տարիների անխոնջ և անսակարկ ծառայության հատուցը (Կոնդակը տե՛ս «Էջմիածին», Ժ, էջ 15):

Երեկոն ավարտվեց խանդավառ մթնոլորտում, իսկ նոյեմբերի 10-ը մանչեստրահայության կյանքում կարևանագրվի որպես պատմական ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օր:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 12, ՇԱՐԵՔՇԱԲԹԻ

ՎԵՐԱԴԱՐՁ ԼՈՆԴՈՆ, ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նոյեմբերի 12-ին, Մանչեստր կատարած մեկօրյա հովվապետական այցելությունից վերադառնալով Լոնդոն, Վեհափառ Հայրապետն այցելեց Հայաստանի Հանրապետության դեսպանատուն:

Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեց դեսպանատան աշխատակազմը՝ դեսպանատան լիակոր հավատարմատար Նունե Սարգսյանի գլխավորությամբ: Ընդունելությանը ներկա էին նաև դեսպանատանը կորակցող բազմաթիվ ազգայիններ:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքն ուղղելով դեսպանատան աշխատակիցներին, ուրախություն հայտնեց, որ այսօր գրեթե բոլոր երկրներում. հայկական եկեղեցիներից բացի, գոյություն ունեն նաև անկախ Հայրենիքի դեսպանատները՝ «որպես մի փոքրիկ հողատարածություն Հայաստան երկրից: Սա մեր բոլորի տունն է՝ փոքրիկ Հայաստանը, հետևաբար աշխույժ և գործուն պահենք այս տունը:

Որքան երջանիկ եմ ես, որ այս առավոտ իմ աչքերը արևին բացելով, վերադարձա Մանչեստր կատարած իմ այցելությունից և այցելեցի անկախ Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, որտեղ իմ մեջ յուրահատուկ ապրումներ և զգացումներ են արթնանում՝ արժանապատվության զգացում, որ ես մի ազգի զավակն եմ ու Հովվապետը, որ արժանիորեն քայլում է մյուս ազգերի շարքում՝ իր դիմագիծ եռագույնով:

Հայոց այս տունը, իմ մտածումով, կոչված է երկու բան մեկնաբանելու՝ աշխարհին ներկայացնել Հայաստանը և ազգերի մեջ եղած, այս պարագային, Եվրոպական քաղաքակրթությունը, մշակույթը փոխանցել Հայաստան:

Ես աղոթում եմ Աստծուն, որ միշտ հովանի և ապավեն լինի բոլորիդ, որպեսզի կարողանաք եռանդուն գործունեությամբ արժանավայել կերպով ներկայացնել մեր Ազատ ու Անկախ Հայրենիքը՝ Մայր Հայաստանը»:

Այնուհետև լիակոր հավատարմատար տիկին Նունե Սարգսյանը իր ուրախությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ այս պատվաբեր այցելության համար, վստահեցնելով, որ Նորին Սրբության հայրական օրհնությունը առավել թափ պիտի հաղորդի և նպատակասլաց դարձնի դեսպանատան գործունեությունը:

Սպա Հայոց Հայրապետը ծանոթացավ դեսպանատան աշխատակիցներին և նրանց ծավալած աշխատանքներին, որոնք, իր բնութագրմամբ, չափազանց լարված են և տնական գործունեություն են պահանջում մի քանի ուղղություններով:

Վերջում տրված հյուրասիրության ընթացքում Նորին Սրբությունն ու դեսպանության աշխատակիցները կիսեցին իրենց մտածումներն ու խոհերը դեսպանության աշխատանքների և դրանց կարգացման վերաբերյալ:

ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Լոնդոնի Սբ. Պետրոս հայկական եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպեց լոնդոնահայ համայնքի ավելի քան 500 հավատացյալների հետ՝ տալով նրանց իր պատգամը:

Վեհափառ Տերը հանգամանորեն անդրադարձավ Հայրենիքի և Սբ. Էջմիածնի ներկա կացությանը՝ կոչ անելով ներկաներին գործուն մասնակցություն բերել հայրենակերտման սրբազան առաքելությանը.

«Սիրելի հոգևոր եղբայրներ և շատ սիրելի ու թանկագին հավատացյալներ, հավատարիմ զավակներ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, որ կապրիք Անգլիա՝ Լոնդոնի այս շրջանի մեջ.

Ես ձեզի իմ խոսքն ուղղելն առաջ, կուզեմ սրտես բխած բառերը այսօրվան խնկամանին մեջ դրված խունկի նման դեպի երկինք ուղղել առ Աստված, առ Հայրն մեր երկնավոր և ասել. «Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ...»: Փառք Քեզ, Աստված, որ տվիր ինձի այս շնորհը, այս երջանկությունը հոգևոր, այս պատիվը, որ ես կարենամ իմ ժողովրդի հետ ըլլալ Մեծն Բրիտանիո այս օրհնյալ հողին վրա:

Հաղորդակից կդառնամ ձեզի հետ և այսօր կուզեմ, որ բոլորս ալ մենք զմեզ դիտենք Աստուծո նայվածքին ներքև, Աստուծո ուսուցումներուն, Քրիստոսի Ավետարանին և մեր Սուրբ Հայրերու սրբազան ավանդության հայելիին մեջ: Պետք է ասեմ, որ Անգլիան ես ճանաչել եմ իմ ուսանողական տարիներից՝ դեռևս 40 տարիներ առաջ: Այն օրվանից ի վեր շատ բան փոխված կտեսնեմ այստեղ: Հետևաբար առաջին անգամը ըլլալով որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, պիտի ըլլամ հաղորդակից ձեզ հետ, պիտի լսեմ ձեզի, պիտի զգամ իմ մեջ ձեր հավատքին կենդանությունը և պիտի խոսիմ

ձեզի, պիտի բաժնեմ ձեզի հետ հացի ու աղի պես իմ մտածումները, իմ զգացումները, իմ պատկերացրած հեռանկարները մեր պատմությանը մեջ բացված այս նոր շրջանին մասին, որ դարձակետային, վճռադրոշմ նշանակություն ունեցող շրջան մըն է մեր ողջ հայոց դարավոր պատմության ընթացքին:

Այսօր ես կուգամ ձեզի նույն Աթոռեն, նույն Հայաստանեն, բայց ո՛չ այն պատկերին մեջեն, ո՛չ այն մթնոլորտին մեջեն, ո՛չ այն կյանքին պայմաններուն մեջեն, ուրկե եկավ իմ նախորդը՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը: Այսօր կուզեի, որ ձեզ ողջունելեն ետքը և ձեր այս բազմության, խուռներամ բազմության մեջ տեսնելեն ու կարդալեն ետքը ձեր հավատքի և կապվածության, ձեր հավատարմության ապրումները՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցվո, կուզեի բերել ձեզի նույն Հայաստանից, նույն Մայր Աթոռից իմ վկայությունները մեր նոր կյանքի մասին:

Այսօր բոլորս ալ կզգանք, որ հայությունը ողջ աշխարհի՝ թե՛ Մայր Հայաստանի, թե՛ Արցախի և թե՛ Սփյուռքին տարածքին, կյանքի նոր ուղիի մեջ մտած են: Այդ ուղին մեր ժողովուրդը երկար տարիներե, դարերե ի վեր կորսնցուցած էր: Այդ ուղիին, այդ ճանապարհին անունն էր ազատություն և անկախություն: Մեզմե շատերուն ծնողները այդ ազատությունը երգեցին, երգել սորվեցուցին, երազեցին, երազել սորվեցուցին մեզի: Պահեցին հույսը կենդանի և ներշնչեցին մեզի կտակը իրենց, որ չկորսնցնենք այդ հույսը: Օր մը այդ հույսը մարմին պիտի առներ, երազը պիտի կյանք ստանար: Եվ այսօր մենք բոլորս, ուր ալ գտնվինք, ինչ տարիքի մեջ ալ որ ըլլանք, ինչ պայմաններու տակ ալ որ ապրինք, պետք է ընդունինք, որ բախտավոր սերունդ մըն ենք, որովհետև մեր աչքերով տեսանք այն, ինչ որ իրենց աչքերը փակած ատեն այս աշխարհեն, մեր հայրերը չկրցան տեսնել, բայց երազը իրենց աչքերուն մեջ գացին, իսպառ մեկնեցան այս աշխարհեն:

Կուգամ ձեզի այն Մայր Աթոռեն, որ երկար տարիներ գտնվեցավ այնպիսի կացության մը մեջ, որ պահեց ոսկեղենիկ լեզուն՝ դրաբարը և մերօրյան, պահեց Մայր Աթոռը՝ Սուրբ Էջմիածինը, որպես խորհրդանիշը հավատքի: Ս՛ներ երջանկահիշատակ նախորդը՝ Վազգեն Ա Կաթողիկոսը, 39 տարիներ ծառայեցուց, շենցուց այդ կենտրոնը, բայց ժողովրդական գործունեությամբ, հարաբերությամբ, ժողովրդի մեջ ներգործությամբ աշխատանք չէր թույլատրված իրեն՝ պայմաններուն բերումովը, որոնք ծանոթ են ձեզ բոլորիդ:

Այսօր Մայր Աթոռը իր Քրիստոսավանդ առաքելությունը և լուսավորչաշավիղ իր՝ գործունեությունը, առաքյալներեն սկիզբ առած, կկատարե և ոչնչված է առավել չափով կատարելու, որովհետև կվայելե բոլոր տեսակի ազատությունները, որ կարող եք դուք երևակայել որևէ երկրում, մանավանդ այս երկրին մեջ, ուր ապրած եք կամ կապրիք և տեսած եք կենդանի վկայությամբ ազատության բարիքները:

Կուգամ ձեզի այն ժողովուրդեն, այն Հայրենիքեն, որ այլևս իր կամքին, իր ըմբռնումին, իր զգացումներուն համապատասխան օրեր կապրի: Այն հայ ժողովրդի կամքի ազատ արտահայտությունն է իր սեփական հողին վրա: Թե ինչ պիտի ըլլա Հայաստանը, այդ արդեն հայերեն կախում ունի:

Այսօր, ահավասիկ, ունենք անկախ պետություն: Սակայն, եղբայրներ և քույրեր, ունենալը մեկ բան է, պահել ապահով, զարգացնել, զորացնելը՝

ուրիշ բան: Քաղաքական պայմանները այնպես դասավորվեցան ամբողջ խորհրդային տարածքին վրա, որ մենք գիտցանք պատմության դեպքերու դարձվածքին առիթը չփախցնել և մեր ինքնանկախությունը հռչակել: Մենք՝ մանավանդ Սփյուռքին մեջ ապրող հայերս, մանկության օրերեն այդ տեսիլքը ընդմիշտ ապրեցանք և ազատությունը երգեցինք:

Մենք այսօր, երբ գտանք ազատությունը և անկախությունը, հարցն այն է, թե ինչ պատասխանատվություն կզգանք ազատագրված մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և թե ինչ պարտավորություն կզգանք մեր ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության համար: Այսօր ես կոչ կուղղեմ մեր բոլոր ժողովուրդին, որ զգա իր մեջ այս փոփոխության անդրադարձը: Եթե մենք պիտի մնանք այնպես, ինչպես էինք ասկե առաջ, ես կկարծեմ, որ մենք պատմության ձայնին հետևած չենք ըլլար, պատմության շարժումին, փոփոխությանց համաձայն ապրած չենք ըլլար մեր կյանքը: Այսօր ամեն մեկ հայ, ուր ալ գտնվի, ինք զինքը պիտի զգա տարբեր, այն երկրին մեջ, ուր կապրի, թեկուզ բնականորեն այդ երկրին կյանքին կմասնակցի երկրին քաղաքացիի իրավունքներով և պարտավորություններով:

Ներքին հոգևոր հայրենիք կկոչեմ ես կապվածության այն զգացումը, որ մենք ունինք մեր հայրենիքի և մեր Եկեղեցիի հանդեպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Այդ հայրենիքը, հոգևոր այդ հայրենիքը աշխարհագրական սահման չի ճանչնար: Քաղաքական ուժերը սահմաններ կդնեն կամ զինվորական գործողություններով սահմանները կփոխվին: Երկիրները կչափվին կիլոմետրերով, բայց հայության այն հայրենիքը, որուն կպատկանին բոլոր անոնք, որոնք ունին իրենց մեջ գիտակցությունը իրենց հայ ըլլալուն, արյունը՝ ժառանգված իրենց հայրերեն, հավատքը՝ իրենց փոխանցված Լուսավորչյան Սուրբ կտակով, ունի իր մշակույթի զգացումը իր մեջ, ոչ մեկ աշխարհագրական սահման չի ճանչնար: Եվ դուք այդ հայրենիքին քաղաքացիներն եք, այդ հայության հարազատ զավակներն եք, նույնիսկ եթե երբեք անձնագրով Հայաստանին հանրապետության քաղաքացիները չըլլաք, դուք չեք դադրի հայության քաղաքացիները ըլլալեն:

Ես եկած եմ այսօր բերելու ձեզի այն նոր Հայաստանի, նորոգյալ Մայր Աթոռի նորացյալ մեր երկրին, մեր ժողովուրդին ու մեր Եկեղեցիին շունչը: Եկած եմ ըսելու, որ բոլորս ալ այդ շունչով պիտի ապրինք, և մեր կյանքին մեջ այլևս ողբի հայրենիք, որբի հայրենիք, սուգի հայրենիք, ավերի հայրենիք չըսենք, ալ կբավե՛ ողբան որ ընկանք անտեղի: Զարդված ենք, հալածված ենք, կբավե՛ այդքան ըսելը: Այժմ ըսենք հարություն առած ենք, նոր ժողովուրդ ենք, նոր կյանք ունինք: Առանց մոռնալու մեր նահատակները, առանց մոռնալու մեր ցավը, պիտի նայինք այսօրվան մեր կյանքին և պիտի հառաջանանք դեպի հոն, ուր մեր պատմությունը մեզ կուղղե և Աստված մեզ կկանչե, մեր ժողովուրդին հարազատագույն ապրումները մեզ կառաջնորդե:

Իմ խոսքս կփակեմ այն մտածումովը, որ փառք տանք Աստուծո, որ երեսուն հազար քառակուսի կիլոմետր տարածություն հողն ունինք, որ հայուն ձեռքերուն մեջն է: Եղբայրներ, քույրեր, այդ հողը կյա՞նք դարձնենք և այլևս ուրիշին նայելու, ուրիշեն բան ակնկալելու հոգերանութենեն դուրս գանք: Ամեն ինչ ընենք, որ ընդհանրական շահը վեր դասենք մանրոգի, ժամանակավոր, մակերեսային այն հարցերեն, որոնք մեր առօրյա կյանքը

երբեմն կխոռովեն, որոնք այլևս ինձի համար իրենց արժեքը կորսնցուցած են: Նոր հույս, նոր մղում, վերանորոգում, – այդ է իմ նշանաբանը, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որուն առաջին սպասավորն եմ այսօր, դառնա հոսանք, դառնա ջրտուք մեր ժողովուրդին հոգևոր կյանքին մեջ, դառնա առաքելություն, որ խմորե մեր ժողովուրդին կյանքը քրիստոնեական հավատքի և մեր հարազատ եկեղեցվո զորացումով: Թող Աստված զորացնե ձեզ բոլորդ»:

Երեկոն ավարտվեց աջահաբուրով և «Հայր մեր»-ի համատեղ երգեցողությամբ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13, ՀԻՆԳՇԱԲԹԻ

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ

Նոյեմբերի 13-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Անգլիայի խորհրդարան՝ Լորդերի պալատ, ուր հրավիրված էր դասախոսելու «Ազգ, որը մերժեց մեռնել» թեմայով:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Անգլիայի հայոց թեմի Առաջնորդ գերշ. Տ. Եղիշե արք. Կիսկիրյանը, Կանադայի հայոց թեմի Առաջնորդ գերշ. Տ Հովնան արք. Տերտերյանը, գավազանակիր հոգշ. Տ. Բագրատ աբեղա Գալստյանը և բրիտանա-հայկական միջխորհրդարանական խմբի անդամներ լորդ Շենոնը, բարոնուհի Քերոլայն Քոկսը և ուրիշներ:

Դասախոսության ընթացքում Վեհափառ Հայրապետը հարյուրից ավելի քաղաքական գործիչների ներկայությամբ խոսեց 20-րդ դարի հայ ժողովրդի պատմության, հատկապես վերանկախացած Հայաստանի և հայ ժողովրդի ստեղծագործ կյանքի մասին:

Վեհափառ Հայրապետը իր երախտագիտությունը հայտնեց լորդ Շենոնին և բարոնուհի Քոկսին, որոնք անցնող 10 տարիների ընթացքում սեր և նվիրում են ցուցաբերել Հայաստանի նկատմամբ:

***

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ՝ «ԱԶԳ, ՈՐ ՄԵՐԺԵՑ ՄԵՌՆԵԼ» ԹԵՄԱՅՈՎ, ՏԵՍ ԱՄՍԱԳՐԻ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ:

***

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Սբ. Պետրոս հայկական եկեղեցում հանդիպեց լոնդոնահայ համայնքի նորընտիր եկեղեցական խորհրդի անդամների հետ /ատենապետ՝ Ռաֆֆի Սարգսյան/, իր օրհնությունն ու հայրենիքին և Ս. Էջմիածնին ծառայելու պատգամը տվեց նորընտիր վարչությանը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՊԱՀԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԵՐՈՒԼԱՅՆ ՔՈԿՍԻ ԵՎ ԼՈՐԴ ՇԵՆՈՒՆԻ ՀԵՏ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14, ՈՒՐԲԱԹ

Նոյեմբերի 14-ին Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ համայնքային կազմակերպությունների վարչությունների անդամների, ինչպես նաև լոնդոնահայ այլ ներկայացուցիչների հետ:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԹՐԻՔ

Նույն օրը, երեկոյան, Լոնդոնի Հայ Եկեղեցական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր հանդիսավոր պաշտոնական ճաշկերույթ՝ շուրջ երեք հարյուր ազգայիններ մասնակցությամբ:

Պաշտոնական ճաշի ընթացքում արտի խոսքեր ասացին ներկաներից շատերը: Անդրադառնալով Հայոց Հայրապետի օրհնաբեր այցելությանը, Եղիշե արքեպիսկոպոս Կիսիրյանն առանձնակի նշեց.

«Վեհափառ Տէր,

Հոգեկան զգացումներ կան զորս կարելի չէ բառերով բացատրել: Այս երեկոյ, այս շքեղ սրահին մէջ համախմբուած մեր հաւատացեալ ժողովուրդը կ՚ապրի իր ամէնէն պայծառ երազներէն մէկուն իրականացումը: Ան եկած է իր խորունկ սիրոյ եւ որդիական ակնածանքի տուրքը մատուցանելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռոյ արժանաւոր Գահակալին, որ կուգայ Ս. Էջմիածինէն իր հովուապետական այցելութիւնը տալու Անգլիոյ իր հոգեւոր զաւակներուն:

Ինձ համար բացառիկ երջանկութիւն ու պատիւ է յանուն Անգլիոյ մեր հաւատացեալ ժողովուրդին բարի գալուստ մաղթել Զերդ Վեհափառութեան այս օրհնաբեր այցին առթիւ, մատուցանելով մեր որդիական ակնածալից եւ սիրազեղ զգացումներն ու մաղթանքները:

Վեհափառ Տէր, Դուք կուգաք աստուածակառոյց Ս. Տաճարէն որ մեր հոգիներու մայրն է եւ մեր գոյութեան տապանակ ուխտին: Ս. Էջմիածինը յընթացս դարուց եղած է մեր հոգեւոր լուսաւորութեան վառարանը, որ աճեցուցած է մեր լոյս հաւատքը: Ան հանդիսացած է շտեմարանը մեր իմացական կեանքին ուր ծաղկած եւ ուրկէ ճիւղաւորուած են մեր գպրութիւնն ու գեղարուեստները:

Էջմիածինը ի սփիւռս աշխարհի հայութեան խոսկայաւ միշտ իր քաղցր յիշատակներով, իր սրբազան աւանդութիւններով, իր անուշաբոյր միւռոնով, իր գրչագիրներով, իր հազարամեայ քարերով, իր կաթողիկէներով, իր սրբատառ կոնդակներով ու շնորհաբաշխումներով, իր ճեմարանով եւ իր բոլոր իրագործումներով:

Հայ ժողովուրդը Ս. Էջմիածնի մէջ տեսաւ միշտ խանդակաթ եւ փարելի մօր մը պատկերը, որ իր մայրական գգուանքներու ներքեւ միշտ պատսպարեց եւ հովանաւորեց մեր ազգային գոյութիւնը: Մայր Եկեղեցի, Մայր Տաճար, Մայրավանք եւ Մայր Աթոռ բացատրութիւնները ինքնին կ՚ապացուցանեն իր մայրական հովանաւորող զորութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութիւնը եւ Ս. Էջմիածինը նոյնացած են հայ ժողովուրդի վշտին ու տառապանքին, ուրախութեան ու յաջողութեան հետ: Ս. Լուսաւորիչ եւ Ս. Էջմիածին խորհրդանշաններն են մեր ազգին ու եկեղեցւոյ անքաժանելիութեան եւ յաւերժութեան: Այս զոյգ անունները կը միացնեն ու կը զոդեն հայերը ի սփիւռս աշխարհի:

Արդարեւ պատմական ճշմարտութիւն է Առաքել Վրդ. Դաւրիժեցի պատմիչին խօսքը թէ՝ «Ի վերայ Աջոյն եւ Ս. Էջմիածնի ամենայն ազգ Հայոց կապեալ կան»: Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջին եւ Ս. Էջմիածնի վրայ հաստատուած է բովանդակ հայ ժողովուրդը, իբրեւ անխախտ ու անսասան հաւատքի ժայռին վրայ:

Նոր ժամանակներու մէջ կ՚ապրինք: Նոր ժամանակները նոր պահանջքներ, նոր պարտաւորութիւններ կը դնեն նաեւ մեր Եկեղեցիին վրայ: Պէտք ունինք հոգեւոր առաջնորդութեան, ամուր կռուանի, յոյսի եւ լոյսի նոր փարոսի, պահելու համար մեր ազգային ու կրօնական դիմագիծն ու ինքնութիւնը:

Բաւական չէ միայն պարծենալ մեր անցեալի մեծութիւններով ու առանձնաշնորհումներով. ունայն է պարծանքի այդ զգացումը, եթէ չ՚ընկերանար մեր առանձնաշնորհումներուն հետ մեր պարտականութեան խոր գիտակցութիւնը՝ բաժին առնելու համար այսօր մեր Եկեղեցւոյ գործին ու առաքելութեան մէջ: Մեր Եկեղեցւոյ ներկայ վիճակը ամենուրեք, պարտականութիւն կը դնէ մեր ժողովուրդի զաւակներուն վրայ մեծագոյն չափով բերելու իրենց ծառայութեան բաժինը մեր Եկեղեցւոյ գործին մէջ:

Վեհափառ Տէր, եկաք, մեզ երջանկացուցիք հոգեպէս, եկաք իբրեւ առաքելաշաւիղ հովուապետ ու մեզի բաշխեցիք առատօրէն Ս. Լուսաւորչի օրհնութիւններն ու պարգեւները: Ձեր շնորհաբաշխ ներկայութիւնը ոչ միայն մեր ժողովուրդին համար կենդանի ու կենսունակ իրականութիւն մը դարձուց Հայոց Հայրապետութիւնը, այլ նաեւ Անգլիոյ ժողովուրդին կրօնական ու աշխարհական բարձրաստիճան անձնաւորութեանց: Անոնք մօտէն ճանչցան Ձերդ Ս. Օծութիւնը ու լսեցին Ձեր հոգելից պատգամներն ու Քրիստոնէական վսեմ գաղափարներով զեղուն իմաստալից խօսքերը:

Դուք միշտ եղած էք սիրոյ սերմնացանը, ուր որ այցելած էք, որու որ հանդիպած էք՝ համայնքներ, անհատներ, զանոնք ըրած էք Ձեր արտը, որուն մէջ ցանած էք Ձեր սիրոյ յորդառատ սրտէն բարի սերմեր, որոնք պարարտ հող գտած են հայ հաւատացեալ ժողովուրդին հոգիներուն մէջ:

Վեհափառ Տէր, թոյլ տուէք մեր սրտագին մաղթանքները միացնել հազարաւորներու աղօթաւոր ձայնին եւ խնդրել Աստուծմէ որ անսասան պահէ Ձեր Սուրբ Գահը եւ անշէջ ու պայծառ Արագածի կատարին Ս. Լուսաւորչի անմար կանթեղը Ս. Սեղանի կամարներուն տակ:

Թող խաղաղութեան ու բարութեան Տէրը առաջնորդէ Ձեր աւետաբեր քայլերը դէպի յաջողութիւն ու խաղաղութիւն: Թող բարեգութ Տէրը միշտ զօրավիգ ու օգնական ըլլայ Ձերդ Ս. Օծութեան:

Երկար կեանք, արեւոտ ու երջանիկ օրեր Ձեզի, Վեհափառ Հայրապետ»:

Այնուհետեւ Սրբազան Հայրը հրավիրեց Նորին Սրբութեանը իր հայրական պատգամը տալու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց այս ջերմ ընդունելության համար: Ապա շարունակելով իր խոսքը, Հայոց Հայրապետը, ինչպես ամենուր, այստեղ ևս առանձնակի ուժգնությամբ շեշտեց այսօրվա հրամայականը՝ տեր կանգնել անկախացած սեփական Հայրենիքին և այդ անկախության ու ապատության հովանու ներքո ապատորեն գործող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին. «Կյանքը կյանք չէ առանց փոփոխության: Առանց փոփոխության կյանք չկա. ուզենք կամ չուզենք փոփոխություն պիտի լինի: Բայց երբ մենք դերակատար կլինենք այդ փոփոխության մեջ, այդ ժամանակ է, որ փոփոխությունը մեզ համար

իմաստ կստանա՝ դառնալով բարեփոխություն, այլապես մենք զոհը կդառնանք փոփոխություններին: Այսօր աշխարհը կփոխվի, շատ արագ կփոխվի, և արագությունն այնքան սրընթաց է, որ մարդկային միտքը չի կարողանում ընկալել այդ բոլոր արագությունները:

Դարեր շարունակ մենք օտարի կամքով շարժած ենք: Մեր կշռույթը, մեր գնացքը օտարները ճշտած են: Եվ այդ բազում դարերի մշուշոտ օրերից հետո այնպես դասավորվեցին դեպքերը, որ մենք վերստին տիրացանք մեր անկախությանն ու ազատությանը: Սովորական դեպք չէր սա, այլ շրջափոխիչ, որովհետև դարերի երազանքն էր այն: Մենք այսօր բախտավորներ ենք, որովհետև շատերը մեզ այդ գաղափարը, երազն ու տեսիլքը տվեցին, բայց իրենք չտեսան այսօրը:

Սիրելի բարեկամներ, փոփոխությունը պատահեց, բայց անհրաժեշտ է այսօր, որ ազգը ինքը փոխվի: Այս փոփոխությանը համապատասխան հոգևոր, ազգային, բարոյական փոփոխություն առաջանա: Ամեն մարդ մտածում է աշխարհը փոխելու մասին, բայց ոչ ոք է մտածում ինքն իրեն փոխելու մասին: Ասում ենք՝ աշխարհը պիտի փոխվի, բայց եթե մենք չփոխվենք, աշխարհի փոփոխությունը ինչպես կարող ենք յուրացնել: Անկախություն ունենալը ուրախություն է պատճառում, բայց անկախություն պահելը, երկիրը շենացնելը այնքան էլ դյուրին գործ չէ:

Այսօր Հայաստանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հայի պատասխանատվությունն են: Նրանց մի բան պատահելու դեպքում ոչ ոքի մեղադրելու իրավունք չունենք, այլ մենք ղմեզ: Հետևաբար, բոլորս միասին, դուք՝ այստեղ, և հայության մյուս զանգվածներն էլ՝ աշխարհի տարբեր ծագերում, պարզապես պարտավոր ենք գործելու մեկ սիրտ, մեկ կամք և մեկ առաքելություն ունենալով: Դեռ բազում դժվարություններ ունենք հաղթահարելու, չփախչենք դրանցից, որովհետև լավ կամ վատ դրանք մերն են: Այլ ձեռք տանք միմյանց և գործենք միահամուռ կերպով՝ առանց մանր ու նեղ հաշիվների, մշտապես ունենալով գերագույն շահի գաղափարը, այսինքն՝ Եկեղեցի, Հայրենիք, Ազգ: Եվ ես մաղթում եմ, որ դուք ապրեք այդ գերագույն շահով Աստուծո փառքի, մեր Եկեղեցու պայծառության, Հայրենիքի շենացման և ազգային բոլոր հավաքական գաղափարների տեսիլքների ու երազների իրականացման նախանձախնդրությամբ: Եվ Աստված թող զորավիգ լինի ձեզ՝ երբեք տեղի չտալու և նահանջ չապրելու համար»:

Ներկաներին ուղղած իր պատգամում Վեհափառ Հայրապետը կրկին անգամ կոչ արեց ուխտավայր ու Աստուծո և մեր ժողովրդի հետ ժամադրավայր դարձնել Հայաստանն ու Սբ. Էջմիածինը: Ավարտելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ասաց. «*Դարձեք առաքյալներ Սբ. Էջմիածնի և մասնակից դարձեք Հայրենակերտումի սրբազան առաքելության գործին: Ամեն*»:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15, ՇԱԲԱԹ

ԱԹՈՌԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԵՎ ՇԱԲԱԹՈՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Նոյեմբերի 15-ի առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Լոնդոնի հայ համայնքի Շաբաթորյա և Կիրակնորյա «Թահթայան»

վարժարաններ: Հայոց Հայրապետի օրհնությունները ստանալու էին եկել դպրոցների շուրջ 300 աշակերտները ուսուցչական կազմերով, նաև գաղութի բոլոր երիտասարդական կազմակերպությունները: Այսպիսի խանդավառ մթնոլորտում երկու վարժարանները միասնական գեղարվեստական հայտագրով ներկայացան Նորին Սրբությանը:

Բացման և բարիգալստյան խոսք ասաց Շնորհք քհն. Բաղդասարյանը, որից հետո աշակերտությունը հանդես եկավ պատրաստված հայտագրով:

Վերջում աշակերտությանն ու հավաքված ողջ բազմությանն իր հայրական խորհուրդներն ու օրհնությունները բաշխեց Վեհափառ Հայրապետը՝ կարևորելով դպրոցի և մշակույթի դերը հայ մատաղ սերնդի կյանքում: Նորին Սրբությունը հատկապես շեշտեց այն գաղափարը, որ Հայրենիքից հեռու, օտար ափերում, այլական մշակույթների և բարքերի մեջ, հայ դպրոցն է, որ ուղղություն պիտի տա հայ մանուկին՝ ներշնչելով նրան սերն ու նվիրումը հանդեպ իր Մայր Եկեղեցին, Հայրենիքը, մշակույթն ու ժողովուրդը:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 16, ԿԻՐԱԿԻ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 16-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, հայոց Սուրբ Պետրոս եկեղեցում մատուցվեց սուրբ և անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մեծ Բրիտանիայի Առաջնորդ Եղիշե արք. Կիպիրյանը: Ս. Պատարագին ներկա էին շուրջ 2000 հայ հավատացյալներ:

Պատարագի սկզբում բազմամարդ թափորով, «Հրաշափառ»-ի երգեցողությամբ, ամպոհվանու ներքո, Սուրբ Պետրոս տաճար մուտք գործեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև Նորին Սրբությունը «Հայր մեր»-ից առաջ քարոզեց հավատացյալ բազմությանը՝ «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր» (ՄՏԹ. Զ 11) բնաբանով:

Վեհափառ Հայրապետը շեշտեց հացի կարևորությունը մարդու կյանքում՝ որոշակի կերպով ընդգծելով և մեկնաբանելով հաց հասկացության չորս ըմբռնումներ. նյութական, մտավոր, ընկերային և հոգևոր: Նորին Սրբությունը, առանձին-առանձին խոսելով այս չորս ըմբռնումների մասին, շեշտեց հոգևոր հացով առատանալու կարևորությունը, այսինքն երբեք չհեռանալ և չկտրվել Աստուծո հետ ունեցած հաղորդությունից և այդ հաղորդությունն արտահայտել ու դրա մասին վկայել կենդանի գործերով՝ ծառայություն և նվիրում Մայր Եկեղեցուն և նորանկախացյալ Մայր Հայրենիքին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ՄԱՇԿԵՐՈՒՑԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՍՏԱՆ ԿՈՂՄԻՑ

Նոյեմբերի 17-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի Անգլիա կատարած հովվապետական անդրանիկ այցելության

ընթացքում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը կազմակերպել էր ճաշկերույթ՝ ազգային բարերար Վաչե Մանուկյանի հյուրընկալությամբ, իր ընտանեկան հարկի տակ:

Ներկա էին Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարությունից պարոն Բոլինկը, Պապական նվիրակ Պաբլո Բուենթեն, Ուկրաինայի և Ռումինիայի դեսպանները, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի, Ռուսաստանի Դաշնության դեսպանների ավագ ներկայացուցիչները:

Հակառակ իր առողջական վիճակին, ճաշկերույթին ներկա էր նաև Հայաստանի նախկին վարչապետ դոկտոր Արմեն Սարգսյանը, որն իր հատուկ գնահատանքի խոսքն ասաց՝ ներկայացնելով Վեհափառ Հայրապետի մեծ նպաստը Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդման գործին :

Վեհափառ Հայրապետը գնահատեց բոլոր պետությունների ցուցաբերած աջակցությունը Հայաստանին: Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին այս օրերին կոչված է խաղաղության և Առաջադիմության հաստատմանը Հայաստանում և Արցախում: Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը լծված է հոգևոր և բարոյա-դաստիարակչական աշխատանքի, որը կնպաստի Հայաստանի անկախության հիմքերի ամրապնդմանը:

Վեհափառ Հայրապետը, առողջություն մաղթելով դոկտոր Արմեն Սարգսյանին, ի նշան գնահատանքի նրան նվիրեց գորգ՝ Սուրբ Էջմիածնի պատկերով:

Բարձր գնահատելով նաև ազգային բարերար Վաչե Մանուկյանի հայրենանվեր գործունեությունը, Վեհափառ Հայրապետը նրան և իր ընտանիքին նվիրեց գորգ՝ Ցերունական Աղոթքի հայերեն հյուսվածքով:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Այսպիսով, ավարտելով իր այցելությունը Մեծ Բրիտանիա, նոյեմբերի 22-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

«Զվարթնոց» օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները և պաշտոնեությունը:

Հասնելով Մայրավանք, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև, Նորին Սրբությունն իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված՝ հերթական այցելության բարեհաջող ավարտի, Հայաստանյայց Եկեղեցու անսասանության և հայ ժողովրդի տոկունության համար:

Կիրակի օրը, նոյեմբերի 24-ին, այս առիթով Վեհափառ Հայրապետը քարոզեց Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, որը ներկայացնում ենք ստորև:

ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ